№ 243 ՈՒՐԲԱԹ 1 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՈՒՐԲԱԹ 1 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 243

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK“.

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 2 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամս 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պէտք վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ) —20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К⁰, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая 38, Պարիզում՝ Площадь Биржи 8

1913 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 րուբլին, ձրիաբար կը ստանան հետեւեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՍԱԹԵՆԻԿ ՊԵՏՐՈՍԵԱՆԸ իր զաւակներով յայտնում են ազգականներին, բարեկամներին և ծանօթներին, որ հանգուցեալ ամուսնու և հօր՝
ԴԵՐԱՍԱՆ
Եգոր Սախչովիչ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ
մահվան եօթներորդ տարելիցին, շաբաթ, նոյեմբերի 2-ին, Խօջիվանքի գերեզմանատան եկեղեցում կը մատուցվի պատարագ, որից յետոյ հանգուցեալի գերեզմանի վրա տեղի կունենայ հոգեհանգիստ և մահարձանի բացումը: Պատարագի սկիզբն է առաւօտեան ժամը 11-ին: Հոգեհանգիստը և մահարձանի բացումը ցեր. ժամը 12-ին:
954. 1—1

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՍԱԼՈՆԻ
հերթական երեկոյթը, ԱՅՍՕՐ, ՈՒՐԲԱԹ, նոյեմբերի 1-ին
ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐԻ
ՅԻՇԱՏԱԿԻՆ Է ՆՈՒԻՐՎՈՒՄ:
ՄՈՒՏՔԸ ՑԱՏՈՒԿ ՀՐԱՒԻՐԱԳՐԵՐՈՎ, որ խնդրվում է Սալօնը մտնելիս կտրօնը յանձնել սպասաւորին: Կողմնակի մարդկանց համար (ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԹԻՒՎ) մուտքի տոմսը 2 ր., որ պէտք է կանխաւ ստանալ:
(ա. օ.)
տռ. 31. 3—3

ՅԱՒԵՐԺ ՅԻՇԱՏԱԿ
ԱԼ. ՔԱԼԱՆԹԱՐ
ՍԻՄԷՕՆ ԶԱՒԱՐԵԱՆ
ԿՈՍՏ. ԽԱՏԻՍԵԱՆ
«ՏԱՐԱԶԻ» հոկտեմբերեան ՀՐԱՏԱՊ №-ը
անթիւ պատկերներով և յօդուածներով:
ԳԻՆԸ 1 ՌՈՒԲԼԻ:
Վերադիր վճարով եւ ապառիկ պատուէր չէ ընդունվում:
ԴԻՄԵԼ՝ ТИФЛИСЪ БЮРО ПЕЧАТИ. Головинскій пр. 41.
(օ. մ.) տռ. 31. 5-1

Առաջնակարգ ցիրկ
Ե. Ղ. Ռ.
ԵՍԻԿՕՎՍԿԻՆԵՐԻ
Այսօր, ուրբաթ, նոյեմբերի 1-ին, տեղի կունենայ էկստրա-օրդինար ներկայացում բաղկացած 3 բաժանմունքից: Այսօր, ֆրանսիական ըմբշամարտի 15-րդ օրը կըմբշամարտեն— Կ. Մայսուրաձէն՝ Սէպնիկի հետ, նոյը Տօմ-Մայէրը՝ Լուկա Կոպլեկի հետ, նոյը Չեմբերս Ցիպոլ՝ սիրող Վանո Բարաղանեանի հետ, յայտնի ըմբիշ Իւան Կայենը՝ Սոկոլի հետ:
Ըմբշամարտի սկիզբը ճիշդ ժ. 9½-ին, իսկ ներկայացման սկիզբը ժ. 11-ին:
տռ. 976. 1—1



Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Վերադառնալով արտասահմանից վերանորոգեց ներքին հիւանդութիւնների ընդունելութիւնը. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱՅՏԻ և սրտի. բժշկութիւն նաև բաւական ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՕՏՕՐԱԿՍՈՎ: Թոքերի և սրտի քննութիւնը լուսաւորված ՌԵՆՏԳԵՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ: Ամեն օր՝ 9—1 ժամ ցեր. և 5—7 ժ. երեկոյեան. ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ ԱՌ. Ժ. 9—10 ՁՐԻ. Бебутовская 23. тел. 7—92.
(ա.օ.) տռ. 977. 100—1

ԲԺԻՇԿ
Մ. Կ. ՄԱՐՈՒՔԵԱՆ
ՄԱՍՆԱԳԷՏ
Սիֆիլիս, վեներական եւ կաշուի
հիւանդութիւններ:
Ընդունելութիւն (առ. ժ. 1—2
(եր. ժ. 5—8
Ելիզաւէտինսկայա փ. № 39. տ. Զաղէթեանի:
(չ.ու.) տռ. 901. 100—4

«ՄՇԱԿԸ» ԱՅՍՈՒՀԵՏԵՒ

Ալէքսանդր Քալանթարի վաղաժամ մահից յետոյ ստանձնելով, իբրև նրա գործակիցը և աշակերտը, «Մշակի» ղեկավարութիւնը, մենք կը կամենայինք մի քանի խօսքով ցոյց տալ, թէ ինչպէս ենք հասկանում մեր ծանր և պատասխանատու միսիայի կատարումը:

«Մշակը», հաւատարիմ իր հիմնադիր Գրիգոր Արծրունու ընդգծած ուղղութեան, որ աւելի ընդարձակվեց և խորացաւ իր երկրորդ խմբագիր Ալ. Քալանթարի ղեկավարութեամբ, կը շարունակէ իր գործունէութիւնը յօգուտ հայ ժողովրդի բարգաւաճման և համամարդկային լուսաւոր գաղափարների տարածման այնպէս, ինչպէս ընթացել է իր առաջին և երկրորդ քառասնամեակների շրջաններում:

«Մշակը», առանց ընդգծելու իր համար որևէ նեղ, մասնաւոր, կուսակցական ծրագիր, կատարելու է հասարակական կեանքի օրգանի դերը ամենայն ազնւութեամբ, շիտակութեամբ, վերաբերվելով թէ մեր ընդհանուր հասարակական և թէ ազգային կեանքի երևոյթներին ու արտայայտութիւններին լրջօրէն և բարեխղճօրէն ուսումնասիրելով այդ երևոյթները:

«Մշակը» պէտք է աշխատէ մտցնել մեր կեանքի մէջ բարոյական գաղափարների իրագործումը:

«Մշակը» իբրև պրօգրէսիստ օրգան, իբրև ջատագով խաղաղ կուլտուրական և էվօլիւցիօնական զարգացման՝ պէտք է անդադար ընթանայ դէպի առաջ, տապալելով բոլոր այն խոչընդոտները, որոնք ցցված նրա ճանապարհի վրա, պէտք է արգելք լինեն հայ ժողովրդի բարոյական, մտաւոր-հոգևոր և սօցիալական կեանքի զարգացման և բարգաւաճման:

Եւ իբրև էվօլիւցիօնական օրգան, որ չէ կարող երբէք յետ գնալ, «Մշակը», ինչպէս մինչև այժմ, այսուհետև ևս աւելի ընդարձակ չափերով լայն բացելու է իր էջերը նորագոյն դեմօկրատիայի կուլտուրա-ազատագրական շարժման և առաջադիմութեան գաղափարների առաջ, գաղափարային երիտասարդութեան արտայայտութիւնների առաջ, նոյնիսկ այն դէպքում, եթէ սկզբունքային տարբերութիւններ լինեն մեր աշխարհահայեացքների հիմքերում. բաւական է, որ այդ աշխարհահայեացքների տարբերութիւնները ուղղված լինեն դէպի ժողովրդի բարօրութիւնը:

Լինելով արտայայտիչ գաղափարական աշխարհահայեացքների, սկզբունքների, լինելով հասարակական օրգան, լինելով պրօգրէսիստ-դեմօկրատիական օրգան, «Մշակը» պէտք է յարատևէ և բնաւ չը կնքէ իր մահկանացուն՝ իր այս կամ այն ղեկավարի անհետացմամբ, այլ պէտք է յարատևէ, ապրի և գործէ ժողովրդի համար և ժողովրդի անունով:

Դրօշակը, վեհ, նուիրական դրօշակը միշտ պէտք է մնայ, և երբ դրօշակակիրը ընկնում է, իբրև մահկանացու, տալով իր հարկը հողի անողոք պահանջներին, նոր դրօշակակիր պէտք է անմիջապէս փոխարինէ ընկնողին և առաջ տանի նրան:

Այսօր, իրերի և պարագաների բերմամբ, մեզ է վիճակվել լինել այդ դրօշակակիրը Գրիգոր Արծրունուց և Ալէքսանդր Քալանթարից յետոյ և լինել «Մշակի» ղեկավարը:

Զգում ենք այդ միսիայի ամբողջ ծանրութիւնը և պատասխանատուութիւնը, որ բարձվում է մեր ուսերի վրա: Կը կարողանա՞նք տանել այդ ծանրութիւնը և դիմանալ նրան: Ճիշդ է, մենք նոր չենք երևում հրապարակախօսական ասպարէզի վրա. ճիշդ է, մենք գործում ենք այդ ասպարէզի վրա ամբողջ 42 տարի. ճիշդ է, մենք վարել ենք «Մշակի» ղեկավարութիւնը Ալ. Քալանթարի հետ վերջին 20 տարվայ ընթացքում, մինչև 1908 թ. իբրև «Մշակի» խմբագրութեան անդամ և ապա, իբրև համախմբագիր, բայց ծանրութիւնը մենք տարել և բաժանել ենք Ալ. Քալանթարի և Յ. Տէր-Մարկոսեանի հետ լծորդօրէն, համերաշխաբար:

Իսկ այսօ՞ր: Այսօր, գոնէ ժամանակաւոր կերպով, ամբողջ ծանրութիւնը և պատասխանատուութիւնը մեր վրա է ընկնում: Եւ այդ ծանրութիւնը, պատասխանատուութիւնը սաստկանում է համակրութեան այն բուռն ցոյցերից, յարգանքի այն ցայտուն նշաններից, որ ամբողջ հայ ժողովուրդը, հայ ինտելիգենցիան արտայայտեց «Մշակին» թէ անցեալ տարի, 40-ամեայ յօբելեանի առիթով, և թէ այժմ՝ ողբացեալ Ալ. Քալանթարի անակնկալ մահվան առիթով: Այդ բուռն համակրութիւնները, ջերմ բարեմաղթութիւնները, ցաւակցական արտայայտութիւնները, ուղղված «Մշակի» խմբագրութեան, պարզ ապացոյցներ են, որ «Մշակը» մի անհրաժեշտ պահանջ է հայ ժողովրդի համար, որ հայ ժողովուրդը «Մշակի» մէջ տեսնում է իր անդաւաճան, հաւատարիմ և անկեղծ բարեկամին ու սրտացաւին:

Եւ ահա այդ վստահութիւնը, այդ ջերմ համակրութիւնը խրախուսում է մեզ և ոգևորում:

Եւ զօրացած այդ վստահութեամբ, համակրութեամբ, լի հաւատով և յուսով, որ «Մշակի» բոլոր հին և վաղեմի բարեկամները, յարգողները, թղթակիցները և աշխատակիցները, որոնք մեզ հետ կրել են աշխատակցութեան լուծը, համոզված մանաւանդ, որ գաղափարական երիտասարդութիւնը և նորագոյն դեմօկրատիական կուլտուրա-ազատագրական շարժման հետևողները, որոնց առաջ լայն բացում ենք «Մշակի» էջերը, կաջակցեն մեզ, մենք նոր եռանդով և պատրաստակամութեամբ հանդէս ենք գալիս կրելու և վարելու մեզ բաժին ընկած խաչը և դրօշակը:

Անշուշտ, մեզ պակասելու է և խորապէս պակասելու է ժողովրդական - գիւղացիական կեանքի այն մեծ հմտութիւնը և էրուդիցիան, որոնցով օժտված էր հանգուցեալ Ալ. Քալանթարը, բայց որովհետև գիւղացիական մասսաների շահերը և նրանց պաշտպանութիւնն այսուհետև ևս «Մշակի» նուիրականպարտականութիւններից մինն է լինելու, ուստի մենք լիայոյս ենք, որ հայկական ագրօնօմիական ընտանիքի և Քալանթարի գիւղատնտես աշխատակիցների միջից մեզ օգնողներ կը լինեն այդ ասպարէզում:

Ի վերջոյ՝ մենք անկեղծօրէն կը ցանկայինք, որ ազգային համերաշխութեան և միութեան գաղափարը, որի անհրաժեշտութիւնը այժմ զգալի է դարձել և թիւրքահայերի մէջ արդէն իրագործվում է, կարողանար իրագործվել և մեր մէջ յօգուտ և ի բարօրութիւն հայ ժողովրդի:

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

30 հոկտեմբերի

Օդեսսա.—Գալիս են զինուորական պատգամաւորներ, որոնք Ռումինիայում ներկայ են գտնվելու Սուվօրովի արձանի բացմանը: Վաղը սպասվում է Թագաւոր Կայսրի ներկայացուցիչ բարօն Կաուլբարսը:

—

Պետերբուրգ.—Ղրիմ մեկնեցին հելլէնների թագուհին և յունաց գահաժառանգը, ներքին գործերի մինիստրի հետ:

—

Թէհրան.—Պալատում նիստի ժամանակ, պետական խնամակալի ճառից յետոյ, մէջլիսի նախկին պատգամաւոր Մուդարիսը սկսեց խստորէն քննադատել պետական խնամակալին և կաբինէտը, և կշտամբեց նրան կեղծութեան մէջ: Վրդովված պետական խնամակալը անմիջապէս մեկնեց տուն: Զայրացած՝ Մուդարիսի վարմունքից, Սիփէհդարը սկսեց նրան հայհոյանքներ թափել. Մուդարիսը մեղադրեց Սիփէհդարին նրանում, որ Պարսկաստանի հիւսիսը վաճառել է ռուսներին: Սիփէհդարը յարձակվեց վիրաւորողի վրա ձեռնափայտով:

—

Աթէնք.—Այսօր օսմանեան պատգամաւորները երկար խորհրդակցեցին յոյն պատգամաւորների հետ: Համաբեա բոլոր կէտերի վերաբերութեամբ կայացաւ համաձայնութիւն՝ Տակիոնէսկուի առաջարկած կօմպրօմիսի հիման վրա: Թիւրք գերիների պահպանութեան ծախքերի, Սալօնիկը անձնատուր լինելու արձանագրութիւնը մեկնելու և սուլթանի մասնաւոր տիրապետութիւնների հարցերը յանձնվում են միջնորդ դատարանի: Երեկոյեան ժամը 7-ին կազմվեց արձանագրութիւն:

—

Սօֆիա.—Բուլղարական գործակալութիւնը հաղորդում է որ սերբ-բուլղարական սահմանաչափ մասնաժողովը Բօժիգարեցի նկատմամբ համաձայնութեան չէ յանգել:

—

Լօնդօն.—Ազգային-լիբերալների ակումբում կայացաւ ագրարային հարցը ուսումնասիրող մասնաժողովի խնճոյքը Լլօյդ Ջօրջի նախագահութեամբ: Նախագահը, ըստ արժանոյն սրակելով մասնաժողովի դժուարին գործունէութիւնը, յայտնեց, որ կառավարութիւնը կամենում է, որպէսզի ագրարային սիստեմի մասին իրական տեղեկութիւնները դառնան ամբողջ երկրի սեփականութիւն: Երկու շաբաթ յետոյ լիբերալների ագրարային բարենորոգումների քարոզը կը տարածվի ամբողջ երկրում և կը տանէ յաղթութիւնը:

Մեծ պետութիւնների մեքերի փոխանակութիւնը յոյն-ալբանական սահմանի հարցի առիթով խոստանում է կօմպրօմիսի յանգել այն առաջարկութիւնների հիման վրա, որ արել է սահմանաչափ մասնաժողովի բրիտանական անդամը: Իտալիան արդէն համաձայնել է այդ առաջարկութիւնների հետ, Աւստրիան՝ երեքից երկուսի հետ: Առաջարկութիւնները փոփոխութիւն չեն մտցնում Լօնդօնի վեհաժողովի վճիռների մէջ և վերաբերում են այն հողաբաժնին, որ Աւստրիան և Իտալիան անուանում են վիճելի:

—

Մուկդէն.—Երկիւղ կրելով որ հասարակութեան մէջ կարող է գրգռում ընկել Խալխի մասին կապված ռուս-չինական պայմանագրի ստորագրութիւնից, իշխանութեանը պատուիրված է արգելել քննադատել պայմանագիրը մամուլի մէջ և թոյլ չը տալ որևէ ձևով դժգոհութիւն արտայայտել պայմանագրի դէմ:

—

Վիեննա.—Պատգամաւորների պալատում սկսվեց Չեխիայի ինքնավարութիւնը վերացնելու առիթով ներկայացված հարցապնդման քննութիւնը: Չեխ սօցիալիստ Սմէրալը յայտնում է, որ չեխական ճգնաժամը կարելի է լուծել միայն նրանով, որ ընդհանուր ընտրողական իրաւունք տրվի չեխական սէյմի համար: Գերմանացի Լօդգեմանը ասաց, որ գերմանացիք՝ չեխերի նման՝ ինքնավարութիւնը վերացնելու մէջ տեսնում են սահմանադրութեան խախտումն, սակայն կասկածում է, թէ բանակցութիւնները համաձայնութիւն առաջ բերեն:

—

Ստօկհօլմ.—Նօբէլի մրցանակը ֆիզիկայի համար տրվեց Լէյդէնի համալսարանի պրօֆեսոր Կամերլինգ Օննէսին, քիմիայի համար՝ Ցիւրիխի համալսարանի պրօֆեսոր Ալֆրէդ Վերնէրին:

—

Մինխէն.—Հանդէսով տեղի ունեցաւ թագաւորական զոյգի թագադրութիւնը:

—

Լիմա.—Երկրաշարժը քանդեց Աբանկայի քաղաքը Պէրույում: Սպանված են 200 մարդ:

—

Տօկիօ.—Կառավարութիւնը ուղարկում է Մեկսիկա «Իզումօ» յածանաւը:

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Համազգային տօնը

Կ. Պօլիս, 18 հոկտեմբեր

Չպիտի նկարագրեմ այն խանդավառ հանդիսակատարութիւնները, որոնք Կ. Պօլսոյ մէջ կատարուեցան, վասնզի անոնց մանրամասնութիւնները Կ. Պօլսոյ թերթերը պիտի բերեն:

Ամբողջ շաբաթ մը բոլոր Կ. Պօլսոյ հայութիւնը ոտքի վրայ էր:

Կ. Պօլիս իր բոլոր հոգեհասութիւնը ցուցադրեց և փառաւոր հանդէսներ կազմակերպեց Կ. Պօլսոյ քառասուն այնքան թաղերուն մէջ, իրարմէ աւելի շքեղ, աւելի փառաւոր:

Բոլոր բանախօսներն, երկու խօսք իրարու քով բերելու կարող անձերը ձեռքէձեռք յափշտակուեցան, աւելի փառաւոր խօսքեր լսելու, աւելի խանդավառ բառեր լսելու, աւելի գեղեցիկ ֆրազներ հնչեցնելու համար ականջներու տակ:

Կ. Պօլսոյ բոլոր հոգհասութեան շտեմարանները պարպուեցան, բոլոր խօսքի, բառի, ֆրազի պաշարները սպառեցան, հայոց ձեռքերը յոգնեցան ծափահարութիւններով, բերանները այլևս պարտասեցան կեցցէ պոռալով:

Խնճոյք չմնաց, որ չգործուէր, շքեղութեան և հանդիսաւորութեան ոճ ու ձև մը չմնաց, որ չկիրարկուէր:

Միայն մէկ խնդիր մը, որ չգործեցին բոլոր այս խանդավառ ու գլխաւոր հայերը, անիկա դրամական իշխանական նուիրատուութեան գաղափարն էր, որ և ոչ մէկ պօլսահայ ունեցաւ:

Անհամար խաչագողութիւններ, չարաշահութիւններ և առու-փախաւութիւններ գործուեցան:

Հետևաբար հանդէսները անցան ապարդիւն և առանց ոևէ որոշ հետք ձգելու:

Ժողովուրդը՝ սովորաբար անգիտակցօրէն ու ամբոխային միամտութեամբ այնքան շատ խանդավառուող, հայ տառերու գիւտին և հայ տպագրութեան մեծ տարեդարձերուն առթիւ ցոյց տուաւ անսովոր խանդավառութիւն և մեծ եռանդ, որուն նմանները շատ քիչ անգամ տեսնուած են, սակայն կարելի չեղաւ այս խանդավառութենէ ու շահագրգռութենէ օգտուիլ:

Ընդհակառակը ամբոխը այնքան գէշ կառավարուեցաւ, որ անիկա խուժանային ամարդութիւններ և վայրենութիւններ ցոյց տուաւ և տեղ-տեղ ազգային քաղաքակրթական տօնին վայելչութիւնը խանգարեց և աղարտեց զայն՝ դարձնելով անիկա վայրենութեան հանդէս մը:

Այսպէս, հոկտ. 12-ի շաբաթ օր, Կումկափուի Մայր-եկեղեցւոյն մէջ՝ ամբոխը չկրցաւ տարրական հասկացողութիւնը ունենալ ստարներու և մինիստրներու հանդէպ գէթ քաղաքավար ըլլալու, և զանոնք կոխոտելու և հրմշտուքի առարկայ ընելու ստիպման առաջ գնաց:

Մեծ բազմութիւնը, որ եկած խռնուած էր Մայր-եկեղեցի, որքան որ ալ նշան մըն էր ժողովուրդին շահագրգռութեան և խանդավառութեան, սակայն երբէք արդարացուցիչ պատճառ մը չէր այդ ամարդի վերաբերումին, որ ցոյց տրուեցաւ հանդէպ օտար հիւրերու, որոնք եկած էին ազգային տօնը շնորհաւորելու։

Բազմաթիւ հանդէսներու մէջ ևս տեսնուեցան կոշտ վարմունքներ։ Կանխօրօք վաճառման հանուած տոմսակները շատ տեղեր սպառած էին և վերջին պահուն այդ հանդէսներուն ներկայ գտնուելու փափաքողներուն համար տրամադրելի տեղ չէր մնացած։ Շատեր այս յետամնացներէն երբ այս կացութեան առջև գտան ինքզինքնին, փոխանակ համակերպելու, ընդհակառակը աւելի պահանջող դարձան և բռնի ներս մտնել ուզեցին։ Ասկէ առաջ եկան զանազան տեղերու մէջ միջադէպեր և անկանոնութիւններ, որոնք բնաւ պատուաբեր չէին։

Ասոնց լրումն ու կատարելութիւնը եղաւ Ադաբազարի մէջ պատահած դէպքը, յօբելեանի հանդէսներու պահուն։

Ադաբազարի մէջ Թափօր մը կազմելով քաղաքին Թաղերուն մէջ շրջիլ կը սկսին։

Կառավարութիւնը կարգիլէ և մի քանի շրջուն ոստիկաններով և ոստիկան զինուորներով կուզէ ցրուել Թափօրը։ Շատերը կը համակերպին կառավարութեան որոշման, սակայն ոմանք կը յամառին և զէնքով կը սպաննեն մէկ ոստիկան և կը վիրաւորեն երեք զինուոր։

Ոչ մէկ հայ կը վիրաւորուի։ Ասիկա պերճախօս փաստ մըն է, թէ հայերն են, որ նախայարձակ եղած են։

Այս դէպքին հետևանօք, հիմա ահագին իրարացում կայ Ադաբազարի մէջ։

Պաշարման վիճակը աւելի խստացած է, կառավարութիւնը 48 ժամ պայմանաժամ տուած է քաղաքին բնակչութեան՝ իր զէնքերը յանձնելու կառավարութեան՝ և բազմաթիւ ձերբակալութիւններ ըրած է։

Զէնքերը հաւաքելու գործողութիւնը շատ մտատանջութիւն պատճառելու բնոյթ ունի, և ասոր համար ազգային շրջանակի մէջ ամէն ջանք կը Թափուի այս խնդրոյն մեծ համեմատութիւններ չտալու համար։ Նիկոմիդիոյ առաջնորդ Ստեփաննոս արքեպիսկ. Յովակիմեան ալ, որ Ադաբազար կը գտնուէր, անմիջապէս հասկնալով կացութեան փափկութիւնը՝ խնդիրը խեղդելու համար փութացած է կառավարիչին մօտ և ցաւ յայտնած է պատահած դէպքին համար, յանուն հայ ազգին։ Ասկէ զատ՝ հայ երևելիները հացկերոյթ մը տուած են Թիւրք երևելիներուն։

Կեդր. վարչութիւնն ալ իր կարգին պ. Վարդգէսը փութացուցած է Ադաբազար՝ իբր իր ներկայացուցիչ՝ խնդիրը կարգադրելու համար։

Այս ընտրութիւնը շատ յարմար էր, և պ. Վարդգէս իր յանդուգն ու անխնայ հարուածող բնաւորութեամբ կրնայ կառավարութեան ալ պատասխանատուութիւնը երևան հանել և մատնանիշ ընել։

Ադաբազարի դէպքը եկաւ դարձեալ արիւն խառնել հայոց ուրախութեան մէջ և դարձեալ դառնութեան և ցաւի պատճառ դառնալ։

Թերևս վաղը կախաղաններն ալ գործեն, և հայոց քաղաքակրթական տօնն ալ արիւնով սրբագործուի ու մաքրագործուի։

Եւ ասոնք ամէնն անոր համար, որ հայերը տարրական քաղաքավարութիւն չունեին և այս տեսակ պարագաներուն մէջ օղիով և գինիով կը փառաւորեն աւելի տօները։

Համազգային տօնն ալ ամբողջին կողմէ ճիշդ այդպէս տօնուեցաւ, և ասոր համար էր որ ոևէ հրահանգիչ ու նիւթապէս արդիւնաբեր չկրցաւ ըլլալ, և հասարակ տօնավաճառի մը երևոյթը միայն առաւ։

Շառայլ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻՑ

—

Վան, 21 սեպտ.

Քաղաքումս կրթական գործը զգալի առաջադիմութիւն է անում, ու մեր քաղաքացի հայերը իրանց զաւակների դաստիարակութեան համար տարէ-տարի աւելի մեծ գումարներ են վճարում. սա անշուշտ մխիթարական երևոյթ է. այնուամենայնիւ արտաքին նպաստների կամ անհատական կտակների ու նուիրատուութիւնների պէտքը միշտ անհրաժեշտ կարևորութիւն է։

Վերջերս Էջմիածնում ու Թիֆլիսում հիւր եղան կրթական գործի երեք ժրաջան մշակներ. դրանցից մէկն է Վարագի Հայրիկեան վարժարանի տեսուչ Արտակ Դարբինեան, որ անծանօթ չէ «Մշակի» խմբագրութեան. երկրորդը՝ Վանի ամերիկ. միսիոնար մր. Րայնօլդս, իսկ երրորդը՝ Երամեան բարձրագոյն վարժարանի տնօրէն Համբարձում Երամեան. երեքն էլ ճամբորդում էին իրանց վարած հաստատութիւնների առաջադիմութեան միջոցներ ապահովելու։

Ա. Դարբինեան վերադառնում էր Կ. Պոլսից, ուր գնացել էր Միացեալ Ընկերութեան հետ բանակցելով Վարագում գիւղատնտեսական մի վարժարան կամ գոնէ մի քանի դասընթացքներ հիմնելու. չենք իմանում թէ Ընկերութիւնը որպիսի ընդունելութիւն արած է այդ առաջարկին, որի մասին Կ. Պոլսի մամուլը հետաքրքրվեց բաւական, շեշտելով այդ առաջարկի ընդունելութեան անհրաժեշտութեան վրա. «Շանթում» պ. Շահրիկեան (Ադամ) նոյն իսկ առաջարկեց, որ Կովկասում «Հայրիկեան ֆոնդ» անունով հաւաքված գումարները յատկացվեն այժմեան այդ նպատակին։ 4000 դոլարի մի գումար Ամերիկայումն է մնում, միայն թէ՝ այնտեղի յանձնախումբը որոշել է այդ գումարը 15,000-ի հասցնելուց յետոյ միայն սկսել գործադրութեան Վարագում. բայց դժբաղդաբար վեց տարուց ի վեր այդ գումարը երբէք չէ աւելացել։

Վարագում այս տարի հիմնվեց դպրոցական մի յատուկ շէնք, որովհետև հինը փլվել էր. վանքը իր միջոցներով վերականգնեց այդ հսկայ շինութիւնը՝ ընկնելով բաւական պարտքի տակ, որովհետև մօտ 10,000 րուբլի ծախքով հազիւ թէ աւարտվի շինութիւնը։ Վանքի հոգաբարձութիւնը և տեսչութիւնը սպասում են, որ Միացեալ Ընկերութիւնն իր Վարժապետանոցում բաց անելիք գիւղատնտեսական բաժանմունքը բաց անի Վարագում, որ այդ բանի համար ունի ամէն տեսակ յարմարութիւններ, ինչպէս հող, ջուր, անասուններ, մեղուանոց, և այլն։ Վանքում այժմ էլ կան գիւղատնտեսական գործնական պարապմունքներ, իսկ առաջարկի նպատակն այն է, որ այդ պարապմունքը գիւղական հիմքերի վրա դրվեն ու ղեկավարվեն մասնագէտ ուսուցչի ցուցմունքներով։

Մր. Րայնօլդս կէս դարից աւելի է՝ ինչ գործում է Վանում ոչ միայն բիբլիական ուղղութեամբ, այլ նաև կրթական ասպարէզում։ Նա շատ բան է արել Վասպուրականի կուլտուրայի և մեր մանուկների դաստիարակութեան համար, անհուն ջանքեր է գործ դրել մեր հայրենի որբերի և այրիների պաշտպանութեան համար, ուստի մեծապէս երախտապարտ ենք նրան, որը մեր ժողովրդի հետ գրեթէ նոյնացել է, ապրելով մեր կեանքով ու ցաւակից լինելով մեր ցաւերին ու վշտերին։ Համիդեան սարսափների ժամանակ նա մի պատոյտ գործեց Եւրոպայում և Ամերիկայում ու քաղաքակիրթ աշխարհին ծանօթացրեց մեր ցաւատանջ իրականութիւնը՝ իսկ նրա ձայնը, որպէս տարիներից ի վեր հայ տառապանքներում ապրող մարդու, հասարակական կարծիքի վրա ուժեղ տպաւորութիւն գործեց։ Այս անգամ նա նորից պատոյտի է ելել կուլտուրական նպատակի համար. նա արդէն մի ծերացած մարդ՝ ուզում է իր կեանքը պսակել մի կրթական հսկայ գործով, ուզում է մի կօլէջ բացել Վանում ու այս նպատակի համար իր խնայողութիւններից գնել է արդէն մի գետին 4000 րուբլով և այժմ աշխատում է թէ այդ գետնի վրա կանգնեցնել մի հոյակապ շէնք և թէ կօլէջի անունով ու նրա ապահովութեան համար մի հսկայ ֆոնդ կազմել։ Այս նպատակի համար նա կոչ է անում Եւրոպայի և Ամերիկայի կրթասէր ու մարդասէր անձանց, կոչ է անում նաև հայ հարուստներին ու աշխատում է իր կեանքի վերջին տարիներում՝ հէնց յաջորդ տարուց սկսած՝ տեսնել Վանում այդ կրթական գործի սկզբնաւորութիւնն ու նրա հիմնաւորումը ներկայում և ապագայում։ Մենք յոյս ունենք, որ մարդասէր ու հայասէր ամերիկացու ձայնը անլսելի չի մնայ և նա բաղդ կունենայ իր կեանքի վերջին տարիներում տեսնել իր նպատակը պսակված։

Մի այդպիսի հսկայ նպատակի համար էլ աշխատում և ճանապարհորդութեան է ձեռնարկել երրորդ ուղևորը՝ Համբարձում Երամեան. նա էլ ձգտում է իր անունով եղած վարժարանը վերածել մի հայկական կօլէջի, որպէսզի այդպիսով՝ օտար հսկայ մեծութիւնների համող բարձրագոյն կրթութեան դէմ մի Թումբ կազմէ։ Հ. Երամեան Վանի կրթական նահապետն է համարվում, որովհետև Վանի երիտասարդութեան մի մեծ մասը նրա դպրոցումն է ուսումն առել։ Երամեան դպրոցը 35 տարուց ի վեր շարունակում է իր գոյութիւնը և առաջադիմում անդադար, իսկ այսօր 400-ի մօտ աշակերտներ ունի՝ 10,000 ր. տարեկան բիւջէով, մի բիւջէ, որ Հայաստանում ոչ մի դպրոց չունի կարծեմ։ Այդպիսի մեծ հաստատութիւն վարում է ահա այս աչաղուրկ մարդը՝ մեծ ձեռնհասութեամբ. իսկ այժմ էլ ձգտում է մի աւելի վեհ նպատակի, հայկ. կօլէջի, որով՝ ինչպէս մր. Րայնօլդս՝ պսակել է ուզում իր կեանքի վախճանը։ Նա կոչ է անում հայ բարերարներին, հայ ժողովրդին ու հայ մամուլին և սպասում է, որ իր ձայնը արձագանք գտնէ, որ հայ ժողովուրդը պսակէ կրթական անխոնջ մշակի ջանքերը։

Իսկ Երամեանի պահանջը մի մեծ բան չէ կարծենք. Նրա դպրոցը նախնականից սկսած ունի արդէն 11 տարիների դասընթացք, որի վրա ուզում է աւելացնել երեք տարվայ շրջան էլ՝ կօլէջի ուղղութեամբ։ Արդ՝ Երամեան վարժարանը այժմ իր 10,000 ր. բիւջէի կիսից աւելին հայթայթում է աշակերտների թոշակներից, 1000 րուբլի էլ խոստացել է տալ վալի Թահսին բէյը պետական բիւջէից, 1000 ր. էլ մի այլ աղբիւրից է ստանում. ուրեմն մնում է իր դպրոցի մշտական դեֆիցիտ տարեկան մօտ 3000 ր., աւելացնենք սրա վրա —3000 ր. էլ կօլէջի երեք դասընթացքի ծախսերի համար, ուրեմն նրա պահանջն է տարեկան մօտ 5—6000 ր. կամ այդչափ տոկոս բերելու համար մի ֆոնդ, որով ոչ միայն Երամեան վարժարանն ընդմիշտ կապահովվի նիւթապէս, այլ նաև կունենայ մի կօլէջ, որ կը կարողանայ մրցել օտար բարձրագոյն հաստատութիւնների հետ ու պատիւ բերել հայ ժողովրդին ու Վասպուրականին։

Մտրակ

ԿԻԼԻԿԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

—

Մերսին, 25 սեպտ.

◆ Տարիէ մը ի վեր գոյութիւն ունի Այնթապի մէջ «Կիլիկեան բարձրագոյն վարժարան» անուն կրթական հաստատութիւնը, հիմնուած տեղւոյն Վարդանեան և Եկեղեցասիրաց ընկերութեանց ջանքերով։ Փառէն վարդապետը, որ որբանոցը ձգելէն վերջ հոն՝ այդ հաստատութեան գլուխն անցած է, շատ աշխատեցաւ այդ միութեան շուրջը բերել նաև Ազնուական ընկերութիւնը, բայց տեղական և կուսակցական որոշ ուղղութիւններէ յառաջացած ու արմատացած հակառակութեանց պատճառաւ հնար չեղաւ։

Այս տարի կաթողիկոսը հոն երթալուն աւելի որոշ գոյն մը տուաւ այդ հաստատութեան, անուանելով «Կիլիկեան ճեմարան», որ սանկ Կիլիկիոյ Արմաշը պիտի ըլլայ, եթէ կրնայ ըլլալ և իր գոյութիւնը նիւթական դժուարութեանց դէմ գալով չը խանգարուի։

Այժմ Այնթապ հաւաքուած են ականաւոր կիլիկեցի եկեղեցականներ։ Վեհափառը մեկնած է անկէ, բայց հոն կը մնան Բաբգէն եպիսկոպոսը, Շահէ և Փառէն ծ. վարդապետները, որոնք յառաջիկայ 13 հոկտեմբերին, հայ գրոց գիւտի տօնին, պիտի կատարեն նաև ճեմարանին պաշտօնական բացումը։

Յաջողութիւն և յարատևութիւն։

◆ Հայ գրոց գիւտին 1500-ամեակի և հայ տպագրութեան 400-ամեակի հանդէսները տօնելու համար այս կողմերը շատ շարժում չի տեսնուիր դժբաղդաբար։

Հաւանական է, որ դպրոցական հանդէսներով լոկ բաւականանան շատ տեղեր։

Միացեալի վարժարաններն ևս, ինչպէս և Հայուհեացին, կը պատրաստուին վայելուչ հանդէսներով և արժանաւորապէս տօնել հայոց անմահ այդ յիշատակները։

◆ Անցեալները հայ մտաւորականութիւնը ծանր կորուստ մը ունեցաւ մահուամբ Առանձարին (Միսաք Գույումճեան), Ադանայի վարժարանաց տնօրէն, որ ազգին մէջ ծանօթ դէմք մըն էր։ Նախկին դաշնակցական շէֆ, ան՝ դեռ Ալեքսանդրիոյ վարժարանին մէջ ուսուցիչ՝ բողոքող հանդիսացաւ և հրատարակեց «Փրկիչները»։

Քաշուելով կուսակցութենէն, ան՝ աչքի առաջ ունենալով Վարդոնիերու վախճանը՝ չկրցաւ բնականաբար ներգործական հակառակորդի մը դերն ստանձնել։ Կուսակցութեան ներքին կեանքին իր ծանօթութեանց իբր կռուի զէնք գործածելը իրեն պիտի չներէին։ Ուստի բաւականացաւ ինքզինքը կրթական գործին նուիրելով. և արդարև՝ եթէ յեղափոխութիւնը կորսնցուց լուրջ գործիչ մը, հայ կրթական աղքատ ասպարէզը շահեցաւ կրթական հոյակապ մշակով մը՝ շատ աւելի արդիւնաւոր։

Ադանայի վարժարանին մէջ երեք տարուայ համար կապուած, անցեալ տարի ստիպուեցաւ հրաժարիլ, դեռ պայմանաժամին տարի մը մնացած, չկրնալով տոկալ կուսակցական աղտոտ ինտրիգներուն։

Ադանայի դպրոցը ամուլ տարի մը բոլորելէն ետք, բարեկամն ու հակառակորդը համոզուեցան, որ դպրոցին բարեկարգութիւնը ան միայն կրնար յառաջ տանիլ։

Նոր յոյսերով գործի սկսած, ահա, աղիքի հիւանդութեամբ մը իր հուժկու մարմինը՝ մէկ շաբաթուայ մէջ՝ ցաւին տեղի կուտայ։

Թաղումը, որուն կը մասնակցին օտարները և կառավարութիւնը, շատ հանդիսաւոր կըլլայ։ Իր երիտասարդ ամուսինը—գերմանուհի մը—ասկէ մէկ երկու տարի առաջ մեռած էր։ Կը թողու 10 տարեկան մանչ մը։

Առանձարին մահը, որ զգալի կորուստ մը եղաւ ազգին համար, կըլլայ նաև արժանի պատիժ մը ադանացիներուն, որ անոր յարգը չճանչցան։

◆ Դպրոցները ամէնուրեք բացուիլ սկսան, օդափոխութեան համար լեռները գացողները սկսած են դառնալ։ Օդերը տաք են դեռ։

Միացեալ Ընկերութեանց Կիլիկիոյ շրջանակին մէջ ունեցած քառասուն վարժարաններն ևս բացուած են ու կը շարունակուին։

Կրթական գործը երթալով կը դժուարանայ այս կողմերը։ Մէկ կողմէն արժանաւոր ուսուցչաց սովը և ուսուցչական պահանջը, իսկ միւս կողմէն տնտեսական կեանքին սղելը կը ծանրացնեն դպրոցաց՝ առանց այն ալ՝ աղքատիկ բիւջէն։

Միացեալ Ընկերութեանց ամառնային վարժապետանոցին այս տարուայ դասընթացքը տեղի ունեցաւ Դէօրթ-Եօլի «Քեւեկեան» որբանոցին մէջ, ուր մօտ 25 հատի չափ նորատի ուսուցիչներ և որբանոցի բարձրագոյն կարգի աշակերտները հետևեցան դասընթացքին մանկավարժական և գիւղատնտեսական ճիւղերուն։

Յայտնի է, թէ Միացեալի բոլոր վարժարանաց մէջ, թէև սկսնակ կերպով, բայց արդիւնապէս կը դասաւանդուի գիւղատնտեսութիւնը։ Դիտող

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԱՐՕՆԷՆ

—

Պատրիարքի ժամանման նախօրեակին

Մուշ, 25 սեպտ.

Առաջին շաբթուն տեղւոյս կառավարութիւնը և մասնաւորապէս քաղաքապետութիւնը չափազանց զբաղեցուց անգլիացի Թիւրքասէր լորդ Վալոնթինի գալու լուրը, որուն մասին օր առաջ Կ. Պոլսէն և Էրզրումէն հեռագրուած էր տեղւոյս կառավարութեան՝ առ ի զգուշութիւն պէտք եղածէն աւելի յարգանք ու մեծարանքներ ընելու անգլիացի այդ զբօսաշրջիկին։ Տեղւոյս կառավարութիւնը մէկ շաբաթէն աւելի տանջուեցաւ զանազան պատրաստութիւններ տեսնելու և մինչև Խնուս ու ս. Կարապետի վանքը յատուկ պատգամաւոր ղրկելու՝ անգլիացի այդ հիւրը պատուասիրելու և բերելու քաղաք։

Վալոնթին անգլիական պաղարիւնութեամբ պատասխաներ է իրեն ընդ առաջ գացողներուն և իր ամուսնոյն ու հետևորդներուն հետ միասին մնացեր է առանձին՝ իր վրաններուն տակ Մուշէն մէկ քառորդ ժամ հեռու։ Կառավարութիւնը վրայ տուաւ իր բոլոր պատրաստութիւնները, և մեր խեղճ քաղաքապետութիւնը ստիպուեցաւ իր 40 տեսակէն աւելի եփուած-պատրաստուած կերակուրները և նիւթերը Թափել կամ ծախել առանց այն ալ իր աննօրմալ բիւջէն ծածկելու համար։ Անգլիացին մերժած է բոլոր հրաւէրները. և հազիւ մէկ երեկոյ իր ամուսնոյն հետ շրջելով խիստ պարզօրէն Մուշի հրապարակին վրայ՝ յաջորդ օրը մեկնեցաւ Բիթլիս։

Թիւրքերը, տրուած տեղեկութեանց վրայ յենլով, չեն հաւատար, թէ դա այն մարդն է, որուն մասին այնքան ազդու հեռագիրներ կային, թէ պէտք է չափազանց պատուել զայն։ Մինչև հիմա՝ Թիւրք խուժանը կը սպասէ մեծ լորդին գալստեան։

Այս շաբթուան նորութիւնը Թիւրքահայերու նորընտիր պատրիարքին գալն է, որուն՝ Բիթլիսէն հոս ժամանումը կը սպասուի օրէ-օր։ Կառավարութիւնը և քաղաքապետութիւնը պատրաստուած են պատրիարքին արտաքոյ կարգի ընդունելութիւն ցոյց տալու։ Կըսուի, թէ կեդրոնական կառավարութիւնը 50 լիրա ճամբու ծախք յատկացուցեր է պատրիարքին համար։ Միևնոյն նպատակի համար Բիթլիսի կուսակալը նուիրած է 20 լիրա և տրամադրած է իր անձնական կառքը՝ Սղերդէն Բիթլիս բերելու և Բիթլիսէն Մուշ հասցնելու համար պատրիարքը։

Բայց ծիծաղելին այն է, որ Բիթլիսէն հոս ոչ միայն կառքի, այլ և եզան արաբայի շնորհքով ճամբայ չկայ։

Տեղւոյս կառավարիչը և քաղաքապետութիւնը 4 ժամ ճանապարհ մինչև Խաս գիւղ ընդ առաջ են երթալու պատրիարքին։ Պիտի տրուին նաև զինուորական պատիւներ պատրիարքին։ Հայ պատգամաւորութիւնը Տարօնի առաջնորդ Ներսէս եպ. Խարախանեանի հետ մէկ շաբաթ է, որ Բիթլիս կը գտնուի։ Երկրորդ պատգամաւորութիւն մը երէկ մեկնեցաւ դէպի Վարդենիս գիւղը, վասն զի վերջին հեռագիրները կը հաստատեն, որ պատրիարքը Բիթլիսէն մեկնելէն ետքը մէկ գիշեր միայն պիտի մնայ Վարդենիս և յաջորդ օրը պիտի հասնի Մուշ։

Վարդենիս գիւղը բաւական կը շեղի Բիթլիսի ուղիղ ճամբէն։ Պատրիարքին ճամբորդութեան այս շեղումը, ըստ մեզ, ունի երկու նպատակ. նախ՝ հեռանալով բուն գիծէն՝ պիտի հեռանայ տխրահռչակ հաջի Մուսա և Կասըմ բէյերու բնակավայր Խըվներ գիւղէն և հետևաբար պիտի ազատի ընդունելու Մուսայի շողոքորթ այցելութիւնը, որ վերջինս կը պատրաստուէր ընել պատրիարքին՝ բազմաթիւ ձիաւորներով ընդառաջելով անոր։ Երկրորդ և աւելի էական նպատակն է՝ այցելել այն գիւղը, որ եղած է առաջին ըմբոստութեան դրօշակ պարզողը համիդեան անարգ րէժիմին դէմ, տալով իր երիտասարդ զաւակներէն բազմաթիւ զոհեր, որոնցմէ մէկը՝ նոյն գիւղացի Մանուկեան Մարգար վարժապետը ժամանակին կախաղան հանուեցաւ Բիթլիսի հրապարակին վրայ։ Այս անմեղ զոհերուն յիշատակը յարգելու համար՝ Հ. Միաց. Ընկ. 4 տարիէ ի վեր հոն գիւղական նախակրթարան մը կը պահէ՝ 4 ուսուցիչով։ Ասով՝ պատրիարքը մէկ քարով երկու Թռչուն պիտի զարնէ. մէկ՝ ազատուելով Մուսայի անհաճոյ այցելութենէն (վասնզի Մուսա բէյ գժտած ըլլալով վարդենիսցիներէն՝ ոևէ պարագայի տակ չի կրնար անոնց սահմանէն ներս անցնիլ), և երկրորդ, ինչպէս ըսինք, ասով յարգած պիտի լինի հանգուցեալ Մարգար վարժապետի քաղցր յիշատակը։

Թախիծ

ԱԼ. ՔԱԼԱՆԹԱՐԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

ԱԼ. ՔԱԼԱՆԹԱՐԻ ՄԱՀՎԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ ԳԱՒԱՌՈՒՄ

—

Բաթումի մեր թղթակից Ա. Նիկողոսեան մեզ տեղեկացնում է, որ այդ քաղաքում այս օրերս տեղական ինտելիգենցիան ժողովվել է Ց. Մեղաւորեանի մօտ և նախապէս յոտնկայս յարգելով հանգուցեալ Ալ. Քալանթարի և Ս. Զաւարեանի յիշատակները՝ խորհրդակցել է նրանց անունները յաւերժացնել՝ առանձին պատգամաւորութիւն նշանակելով հանգուցեալների թաղումներին ներկայ գտնվելու։ Վճռվել է նոյնպէս՝ դագաղների վրա պսակ դնելու փոխարէն՝ հանգանակութիւն բանալ և հաւաքվելիք գումարներն ուղարկել ինչպէս Ալ. Քալանթարի, նոյնպէս և Ս. Զաւարեանի անունները յաւերժացնելու նպատակով կազմվելիք ֆոնդերին։

Նոյնպէս Գորուց մեզ գրում են, որ այնտեղ էլ, ինչպէս և նրա մերձակայ—3 վերստ հեռու—Բերբուկ գիւղում, նախաձեռնութեամբ գործակալ Ց. ք. Խուցեանի, կիրակի՝ հոկտ. 27-ին տեղի են ունեցել հոգեհանգիստներ։ Բերբուկում յիշեալ քահանան հայ և վրացի գիւղացիներին բացատրել է հանգուցեալ Ալ. Քալանթարի գործունէութեան մասին։

Ղզլախի գաւառի Քարվանսարա գիւղում ևս կիրակի, հոկտ. 27-ին, պատարագից յետոյ կատարվել է հոգեհանգիստ Ալ. Քալանթարի, Ս. Զաւարեանի և Կ. Խատիսեանի յիշատակներին։ Խօսել է Մ. ք. Էգիլեանը հանգուցեալների գործունէութեան մասին և յորդորել ներկայ եղող հոծ բազմութեանը՝ ընթանալ հանգուցեալների գծած շաւղով։ Իսկ Քարվանսարայի մանր վարկի ընկերութիւնը որոշել է Ալ. Քալանթարի և Կ. Խատիսեանի յիշատակները յաւերժացնել՝ պահելով նրանց անունով մի-մի թոշակաւոր տեղական եկ. ծխ. դպրոցում։

Մեղրիից ևս գրում է մեր թղթակից Ե. Վարդանեան, որ շաբաթ, հոկտ. 26-ին, տեղական եկեղեցում պատարագ և հոգեհանգիստ է կատարվել հանգուցեալ Ալ. Քալանթարի յիշատակին՝ ներկայութեամբ, ի միջի այլոց, թեմական տեսուչ Տ. Ռաշմաճեանի, այդ շրջանի դպրոցների ուսուցչութեան, տեղական խմբի և աշակերտութեան։

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ ՈՒՂՂՎԱԾ «ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Պետերբուրգ, 23 հոկտ.

Տեղեկանալով ձեր ամենայարգելի խմբագիր Ալեքսանդր Քալանթարի մահը, սրանով խնդրում ենք ընդունել մեր անկեղծ ցաւակցութիւնը ձեզ հասած դժբաղդութեան առիթով։

Հաւատացած ենք, որ ձեր որբացեալ լրագրական ընտանիքը կը գտնէ արժանաւոր փոխանորդի հանգուցեալից յետոյ։ Մնում ենք կատարեալ յարգանքով։

«Ալֆա-Նոբէլ» ընկ. վարչութիւն

—

Կարս, 24 հոկտ.

Հայոց դպրոցի հոգաբարձութիւնը արտայայտում է անկեղծ ցաւակցութիւն Քալանթարի՝ հասարակական ասպարէզում երկարամեայ աշխատաւորի վաղաժամ մահվան առիթով. յայտնեցէք մեր ցաւակցութիւնը հանգուցեալի ընտանիքին։

Հոգաբարձութիւն

—

Մոսկվա, 24 հոկտ.

Խորապէս ցաւակցում եմ։

Դր. Ղուլեան

—

Վելիսցիխէ, 24 հոկտ.

Խորապէս ցնցված ենք Քալանթարի վաղաժամ մահվան վշտով. դառնապէս ողբում ենք հազուագիւտ մարտնչողին ժողովրդի կուլտուրական բարգաւաճման ասպարէզում։

Սիմէօն ք. Տէր-Ղազարեան, Պետրոսեան

—

Էջմիածին, 24 հոկտ.

Խորապէս ափսոսում և յայտնում եմ սրտագին ցաւակցութիւն Քալանթարի մահվան առիթով։ Հանգիստ անդուլ, մեծ և անկեղծ մշակի աճիւնին։ Հայկ Դաղեան

—

Կաղզուան, 24 հոկտ.

Մայրենի ճշմարտութեան և լուսաւորութեան պաշտպանի յանկարծակի մահով ցնցված, շտապում եմ արտայայտել խմբագրութեանդ իմ անկեղծ ցաւակցութիւնը լուսաւորիչ առաջնորդողի կորստեան պատճառով։

Մկրտիչ ք. Տէր-Գրիգորեան

—

Կարս, 24 հոկտ.

Հայ ազգի ցաւերով 40 տարի տանջված ու չարչարված մեծ մարդու և անփոխարինելի գործիչ Քալանթարի մահը դառնապէս ողբում եմ։

Անիի աւերակների սգաւոր վանահայր Միքայէլ վարդապետ

—

Բագու, 24 հոկտ.

Սրտով միանում եմ խմբագրութեանդ վշտին. խնդրում եմ անկեղծ ցաւակցութիւնս յայտնել անմոռանալի Քալանթարի ընտանիքին։ Բժիշկ Ցակոբեան

—

Պետերբուրգ, 24 հոկտ.

Չը կայ այլևս Քալանթարը. կորուստը մեծ է, դժուար է խօսքով արտայայտել. հեռացաւ մեզանից այն մարդը, որը ամբողջ իր կեանքը աշխատում էր ժողովրդի բարօրութեան համար։ Թող հողը թեթև լինի նրա համար։ Լևոն Գրիգորեան

—

Երևան, 24 հոկտ.

Երևանի հայոց սեմինարիայի հոգաբարձութիւնը արտայայտում է իր խորին ցաւակցութիւնը անդուլ հասարակական գործիչ և հրապարակախօս Քալանթարի վաղաժամ մահվան առիթով։

Հոգաբարձութիւն

—

Պետերբուրգ, 24 հոկտ.

Պետերբուրգի հայոց գեղարուեստական ընկերութիւնը խորապէս ցաւակցում է անզուլ գործիչ, ազգային շահերի արժանաւոր պաշտպան, լրագրի ազնիւ ղեկավար Քալանթարի ծանր կորստի համար և միացնում է իր վիշտը ընդհանուրի վշտին։

Վարչութիւն

—

Բագու, 24 հոկտ.

Սրտի կսկիծով ողբում ենք մեր գործիչ Քալանթարի մահը։ Միացրէք մեր վիշտը խմբագրութեան և հանգուցեալի ընտանիքի վշտի հետ։

Կարապետ Աղաջանեան, Ղարիբեան, Աստուածատրեան, Մանուկեան, Տէր-Ղազարեան, Կանդալեան, Խուդիաշվիլի։

—

Բախարդէն, 24 հոկտ.

Սրտով ցաւում ենք յարգելի հասարակական գործիչ, «Մշակի» խմբագիր Քալանթարի անսպասելի մահվան համար։

Մկրտումեան, Օհանէսեան

—

Շամախի, 24 հոկտ.

Լիովին բաժանում եմ ձեր կրած վիշտը։

Տիգրան Տէր-Օհանեան

—

Պետերբուրգ, 24 հոկտ.

Անկեղծ ցաւակցում եմ ձեր վշտին։

Պրավօխեռնսկի

—

Ստաւրօպօլ, 24 հոկտ.

Հայոց դպրոցի ուսուցչական մարմինը խոր վշտով արտայայտում է իր ցաւակցութիւնը անզուգ, անփոխարինելի հասարակական գործիչ Քալանթարի կորստի առիթով։

Տէր-Աբրահամեան, Տէր-Յովհաննիսեան քհ., Խէչոյեան, Տէր-Յովսէփեան։

—

Սիմֆէրօպօլ, 24 հոկտ.

Խորապէս վշտացած եմ անձնուէր մարտիկ, հայ գիւղացիութեան փորձված բարեկամ Քալանթարի վաղաժամ մահով։ Կիրակի օրը կը կատարենք հոգեհանգիստ։

Տէր-Երուանդ Նալբանդեան

—

Բաթում, 24 հոկտ.

Անդրկովկասի փոքրաթիւ գիւղատնտեսական ընտանիքի հետ խորապէս վշտացած եմ մեր ամենալաւ գործիչ Քալանթարի կորստի առիթով։

Բաթումի շրջանային գիւղատնտես՝ Գամուխաշվիլի

—

Աստրախան, 24 հոկտ.

Դառնապէս ողբում ենք «Մշակի» խմբագիր, ամենից յարգված Քալանթարի, հասարակական և գիւղատնտեսական անփոխարինելի գործիչի, գիւղացիութեան անկեղծ բարեկամի և ժողովրդական դասախօսի վաղաժամ մահը։ Մեր ներկայացուցիչ նշանակում ենք Սօլօվեանին։

Մշակի» բաժանորդների և յարգողների կողմից աշխատակիցներ՝

Մկրտումեան քահ., Ասլանեան քահ., Աբէլ Ալբեսեան

—

Ախալցխա, 24 հոկտ.

Քալանթարի կորուստը անփոխարինելի և անգնահատելի է. անկեղծ ցաւակցութիւն եմ յայտնում խմբագրութեանդ և հանգուցեալի ընտանիքին՝ ժողովրդի այդ արժանի մշակի կորստեան համար։

Յաւերժ յիշատակ։

Ախալցխայի յաջորդ Իսահակ վարդ.

—

Ցարսկիէ-Կօլօդցի, 24 հոկտ.

Հայ հասարակութիւնը արտայայտում է սրտագին խորին ցաւակցութիւն խմբագիր Քալանթարի վաղաժամ մահվան առիթով։

Պատգամաւոր Լիանոզեան

—

Զաքաթալա, 24 հոկտ.

Ցնցված ողբում ենք անսպասելի և վաղաժամ մահը պատկառելի, անխոնջ և օգտաւէտ գործիչ Քալանթարի։

Տէր-Մկրտիչ

—

Թիֆլիս, 24 հոկտ.

Միանում եմ ընդհանուր վշտին. Քալանթարի մահը շատ մեծ կորուստ է հասարակութեան համար։

Բժիշկ Մարուքեան

—

Բագու, 24 հոկտ.

Արտայայտում եմ խորին ցաւակցութիւն և աննկարագրելի հոգեկան վիշտ իմ թանգագին և անմոռանալի ուսուցիչ Քալանթարի մահվան առիթով։ Հանգիստ թանգագին վարժապետի աճիւնին։

Ասլան Նալբանդեան

—

Ստաւրօպօլ, 24 հոկտ.

Յաւերժ յիշատակ Արծրունու եռանդուն, անխոնջ երկրպագու և նրա համոզմունքները կրող Քալանթարին։

Տէր-Յովհաննիսեան քահ.

—

Բագու, 24 հոկտ.

Հոգւոյ խորքից միանում եմ բոլոր նրանց վշտին, որոնք ողբում են թանգագին «Մշակի» վաղաժամ մեռած խմբագրի, յայտնի հասարակական գործիչ և պիտանի կուլտուրական մշակ Քալանթարի մահը։

Բժիշկ Ազամիրզեան

—

Աստրախան, 24 հոկտ.

Աստրախանի Հայ Կանանց Բարեգործական Ընկերութիւնը, վշտացած՝ յայտնի հրապարակախօս և «Մշակի» ղեկավար Քալանթարի յանկարծակի մահվան տխուր լուրով, արտայայտում է իր խորին ցաւակցութիւնը։

Նախագահուհի Մելիքենցեան

—

Վարշավա, 24 հոկտ.

Ընդունեցէք խորին ցաւակցութիւնս խմբագրի վաղաժամ մահվան առիթով. ողբում եմ հասարակական գաղափարական գործչի անփոխարինելի կորուստը։

Եարզուլեան

—

Տաշքենդ, 24 հոկտ.

Խոնարհվում ենք հայ անդաստանի անխոնջ մշակ Քալանթարի աճիւնի առաջ. յաւերժ յիշատակ անզրդուելի հրապարակախօսին և հայ կենաց ազնիւ իրականութեան վեհ պաշտպանին։

Տաշքենդի ծխ. դպ. հոգաբարձութիւն

—

Բօրիսօգլէբսկ, 24 հոկտ.

Խորապէս ափսոսում ենք մեր յարգելի խմբագրի մահվան համար և բաժանում ենք ձեր վիշտը։ Գիլանեան

—

Բագու, 24 հոկտ.

Հոգւու խորքից միանում ենք բոլոր նրանց վշտին, որոնք ողբում են հասարակական գործիչ Քալանթարի վաղաժամ մահը։

Ռոզալիա, Սիմէօն Ազամիրզեաններ

—

Պետերբուրգ, 24 հոկտ.

(Ուղղված հանգուցեալի ընտանիքին)

Թանգագին Լևոն, շատ մեծ է կորուստը, խօսք չը կայ մխիթարելու քեզ. Թող Աստուած համբերութիւն տայ քեզ և մօրդ։ Հեռացաւ մեզանից Ալէքսանդրը, բայց նրա անունը յաւիտեան կը մնայ ժողովրդի սրտում, այն ժողովրդի, որի բարօրութեան համար նա աշխատեց իր ամբողջ կեանքը։

Լևոն Գրիգորեանց

—

Իզօբիլնօ-Տիչինսկի, 24 հոկտ.

Հոգով ողբում եմ Քալանթարի մահը. ընդունեցէք մեր ցաւակցութիւնը։

Սիմէօն Եագուբեանց

—

Ղամարլու, 24 հոկտ.

Յայտնում եմ անկեղծ ցաւակցութիւնս Քալանթարի, Զաւարեանի և Խատիսեանի մահվան առիթով։ Նրանք մինչև իրանց վերջին շունչը աշխատում էին ժողովրդի բարօրութեան համար։

Պօղոս Աբրահամեան

—

Թարթառ, 24 հոկտ.

Տապաստ ընկած անխոնջ Քալանթարի մահը ցնցեց հոգիս. ընկաւ գործիչը, ընկաւ գիւղացիական մասսաների բարեկամը։

Ջերմեռանդութեամբ խոնարհվում եմ նրա աճիւնի առաջ։ Գէորգ Մուրադեան

—

Գօրիս, 24 հոկտ.

Ողբում եմ անփոխարինելի Քալանթարի մահը։

Համբարձում Տէր-Յովհաննիսեան

—

Մօսկվա, 24 հոկտ.

Անզէմստվային Կովկասի զէմստվային գործիչ Քալանթարի գործունէութիւնը՝ գեղեցիկ յուշարձան է նրա համար։

Պօղոս Աբէլեանց
Գարեգին Խոնդքարեան

—

Թիֆլիսում գտնվող Բագուի դումայի ձայնաւոր Անուշաւան Քալանթարին Բագուի քաղաքագլխի պաշտօնակատար Յարութիւնեանը հեռագրել է հետևեալը. «Խորապէս վշտացած թանգագին Ալէքսանդր Քալանթարի՝ ոչ միայն հասարակական գործչի, այլ և իմ անձնական բարեկամի՝ վաղաժամ մահից, խնդրում եմ հաղորդել հանգուցեալի ընտանիքին իմ անկեղծ ցաւակցութիւնը։ Հիւանդութեան պատճառով հնարաւորութիւն չունէի իր ժամանակին վըշտակցութիւն յայտնել ամենախոշոր և գործունեայ գործիչներից մէկի ծանր կորստեան առիթով»։

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱԼ. ՔԱԼԱՆԹԱՐԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

Բաթում, 30 հոկտ.

Բաթումի քաղաքային դուման, հոկտ 28-ի իր նիստում լսելով իմ զեկուցումը՝ «Մշակի» խմբագիր և ականաւոր հասարակական գործիչ Ալ. Քալանթարի անսպասելի մահվան մասին, յարգեց հանգուցեալի յիշատակը ոտքի կանգնելով։

Այդ մասին պատիւ ունեմ յայտնել խմբագրութեանդ՝ իբրև լրացումն հոկտ. 24-ի իմ ուղարկած հեռագրի։

Քաղաքագլխի պաշտօնակատար

ՊՍԱԿԻ ՓՈԽԱՐԷՆ

Ալ. Քալանթարի անուան հիմնելիք ֆօնդի համար ստացանք. 1) Բալախանիից՝ Պահլաւունի ամուսիններից 50 ռուբ., 2) Բագուից՝ Յովհ. Փանեանից 20 ռուբ., 3) Բագուից՝ Լիանօզեանի գործարանից 50 ռուբ., 4) Թիֆլիսում՝ Լևոն և Աննա Ղուլեաններից 25 ռ., 5) Թիֆլիսում՝ Հայրապետ Տէր-Պօղոսեանից 5 ռ., 6) Բագուից՝ Եղիսաբէթ Սարգսեանից 50 ռուբլի։

—

Հայոց Գիւղատնտ. Ընկերութեան վարչութիւնը ստացել է Համբարձում Մելիքեանից 25 ռ., որը, պսակի փոխարէն, յատկացվելու է Ալ. Քալանթարի անուան գիւղատնտեսական ֆօնդին։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Պարիզ, 30 հոկտեմբերի

(?)-ի հետ զրուցելիս պարզվեց, որ Սազօնովը յայտնել է՝ թէ մեծ պետութիւնները համաձայնութեան են եկել հայկական բարենորոգումների վերաբերութեամբ և որ ռուսաց կառավարութիւնը վճռել է իրականացնել տալ այդ բարենորոգումները։

—

Բերլինում հրատարակվող պրօֆ. դօկտոր Լիւդվիգ Շտայնի յայտնի քաղաքական ամսագրի—«Nord und Süd»—մէջ (նոյեմբերի համարում) լոյս է տեսել Բ. Իշխանեանի երկրորդ յօդուածը հայկական հարցի մասին՝ «Ինչու Հայաստանում չը կայ ազգային շարժում» (մի էջ Փոքր-Ասիայի քաղաքական կացութեան վերաբերեալ) վերնագրով։

Բոլոր այն օտար ընթերցողները, որոնց առեղծուած էր թւում Թիւրք պետութեան մէջ ամենից շատ վտանգված, հարստահարված և տանջված հայ ժողովրդի միաժամանակ ամենամեծ անտարբերութիւնը և քաղաքական թմրած վիճակը՝ Թիւրք կառավարութեան ամենաահաւոր ճգնաժամի շրջանում, այդպիսի ընթերցողները կարող են իրանց հարցագրգռութեան բաւարարութիւնը գտնել Իշխանեանի ընդարձակ բացատրութիւնների մէջ։ Հարկ էր, որ այդպիսի թեմայի վերաբերեալ ևս յօդուած լոյս տեսնէր քաղաքական բարձր շրջաններում տարածված օրգանի մէջ։

Հայ ընթերցողների համար ևս հետաքրքրութիւն ունեցող յօդուածի մանրամասները թողնենք մի ուրիշ անգամվայ։ Այստեղ շեշտենք միայն, որ Իշխանեանը յաջորդաբար թւում և իրարով պայմանաւորում է մի շարք օբիեկտիվ արգելքներ՝ ներքին և արտաքին բնաւորութեամբ, որոնք անհնարին դարձրին նպաստաւոր մօմենտներից օգտվելու և ազգային շարժում ծաւալելու երկրի ներսում։ Անշուշտ պաշտօնական Եւրոպան այլ կերպ կը վերաբերվէր դէպի հայկական հարցը, եթէ վերջինս հասունանար ու եփվէր քաղաքական շարժման բովի մէջ։ Ինչպէս միշտ, այնպէս էլ այս անգամ կերակրեց Եւրոպան հայերին անբովանդակ յոյսերով, մինչև որ ճգնաժամը անցաւ. իսկ հայերը, իրանց հերթին, այժմ աւելի քան առաջ՝ խաբվեցին քաղցր խօսքերից և անգրաւական յուսադրութիւններից։ Հայաստանում տիրող քաղաքական թմրութիւն և շարժում չը լինելու որոշ պատասխանատուութիւնը ծանրանում է, ըստ Իշխանեանի, հայ քաղաքական կազմակերպութիւնների վրա։ Իշխանեանի առաջին յօդուածը նոյն հանդէսում գրաւել էր առանձին ուշադրութիւն օտար մամուլի մէջ։ Այսպէս՝ օրինակ՝ «Temps»-ը բերել է ընդարձակ կտորներ այդ յօդուածից, արտայայտելով իր համաձայնութիւնը։ Յուսալու է, որ նոյն աջողութիւնը կունենայ նաև երկրորդ յօդուածը, որը զետեղվել է առաջնորդողից անմիջապէս յետոյ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՈԲԵԼԵԱՆ

(Նուէր բոլոր հայերին)

—

Հայ տառերի գիւտի և տպագրութեան կուլտուրական ազգային յոբելեան... փառահեղ տօնակատարութիւն... 250 ներկայացուցիչներ զանազան վայրերից եկած... 400 հեռագիրներ... շնորհաւորութիւններ ռուսներից, վրացիներից, յոյներից, Թուրքերից, կաթօլիկ և բողոքական հիմնարկութիւններից...

Փառաւոր հոգեհանգիստ...

Փառաւոր քարոզներ, ճառեր, դասախօսութիւններ...

Փառաւոր ճաշկերոյթ...

Յետոյ...

Յետոյ «պատգամաւորները մեկնեցին էջմիածնից»։

«Յօգուտ դպրոցական ֆօնդի՝ ի յաւերժացումն համազգային յոբելեանի, ստացված տեղեկութիւնների համաձայն, կը հանգանակվի մօտ կէս միլիոն ռուբլի» *)։

— Մօտ կէս միլիոն ռուբլի... ի յաւերժացումն համազգային յոբելեանի...

Ես սխալ չը կարդացի։ Այդպէս էր գրված՝ մօտ... կէս միլիոն ռուբլի... ի յաւերժացումն համազգային յոբելեանի...

Երա՞զ է դա, մի ցնորք թէ մեր իրականութիւնը։

Եւ... պատգամաւորները մեկնեցին էջմիածնից։

Արդեօք իրանց պարտքը կատարա՞ծ համարելով...

Եկան հեռաւոր տեղերից, տեսան իրար, խօսեցին, կարդացին, կերան, ստացան Վեհի օրհնութիւնը և... մեկնեցին, հանգստացնելով մեզ, թէ մօտ... կէս միլիոն ռուբլի կը հանգանակվի։

Իբր թէ այդ կէս միլիոնը կարող է յաւերժացնել մի համազգային յոբելեան։

Դա ինչ խղճուկ յոբելեան է։

Միթէ դա համազգային տօնակատարութիւն է։

Ո՞ւր է անմահ Գամառ-Քաթիպան իր երկտողով՝

Զարմանալի ազգ էք, հայեր, աւա՛ղ,
Ձեր յոբելեանն է մուրացկի Թաթախ։

Կէս միլիոնը մի մուրացկի թաթախ է այդպիսի մեծ գործում և կէս միլիոնը երբէք կարող չէ յաւերժացնել համազգային յոբելեանը։

Պատգամաւորները մեկնեցին էջմիածնից և պատգամաւորների պարտականութիւնը սկսվեց նոյն օրը, մանաւանդ երբ նրանք եկան, հասան իրանց վայրերը։

Այդ պարտականութիւնն է ապահովել դպրոցական ֆօնդը, ինչ ճանապարհներով, միջոցներով կուզէ լինի։

Գրենք, խօսենք, ճառեր ասենք, հեռագիրներ խփենք, ուտենք, խմենք, ստանանք բարի Վեհի օրհնութիւնը և մեկնենք, գանք մեր վայրերը, բայց մի րոպէ, մի րոպէ չը մոռացած մեր պարտականութիւնը. ինչ ճանապարհներով ու միջոցներով կուզէ լինի՝ ապահովենք դպրոցական ֆօնդը...

Դա մեր ազգի լինել թէ չը լինելն է։

Դա մեզ համար ամենակարևորն է։

Այսուհետև ամեն մի պարտաճանաչ, ազնիւ և լաւ հայ իր առաջը պէտք է տեսնէ մի յայտնի նպատակ՝ դպրոցական ֆօնդ։

Առանց դպրոցի չը կայ հայ և հայութիւն։

Առանց դպրոցի մենք մատնված ենք այլասերման։

Առանց դպրոցի մենք ոչինչ ենք, ոչինչ...

Մօտ կէս միլիոնը՝ ծաղրելի աղքատի թաթախն է դպրոցական ֆօնդի։

Մեզ պէտք են միլիոններ...

Մենք պարտական ենք այդ միլիոնները որոնել, ստեղծել, գտնել, թէկուզ ծնել, այո, ծնել։

Չը կայ ուրիշ ճանապարհ հայի փրկութեան համար։

Դա ամենամեծ գործն է մեր իրականութեան մէջ և արժէ մաշել, աշխատել, ծառայել, անգամ ապրել դպրոցական ֆօնդի իրականացման համար։ Դպրոցական ֆօնդը մնում է և սպասում իր անձնուրաց գործիչներին...

Համազգային յոբելեանը կատարվեց միայն... ձևականապէս։

Համազգային յոբելեանը դեռ սպասում է իր տօնակատարութեան օրին։

Այդ գեղեցիկ, պայծառ օրը կը գայ միայն այն ժամանակ, երբ մեր դպրոցները կապահովվեն, երբ մենք կունենանք դպրոցական ֆօնդ։

Մինչև այդ գեղեցիկ և պայծառ օրը թող սև սուգը միայն տիրէ պարտաճանաչ հայերիս ազնիւ և զգայուն սրտերին...

Գր. Զալխուշեան

ՅՕԳՈՒՏ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՕՆԴԻ

Ստացանք Շահնազար գիւղի հայ-կաթօլիկ համայնքից 10 ռուբլի։ Նախորդ ստացվածների հետ միասին («Մշակ» № 233) ունենք ստացած ընդամենը 604 ռուբլի։

ԶԷՄՍՏՎՕՅԻ ՌԵՖՈՐՄԸ

—

1890 թւի օրէնքով փոփոխութիւնների ենթարկված զեմստվօն վաղուց արդէն չի համապատասխանում կեանքի պահանջներին և՝ շնորհիւ մի շարք պայմանների՝ անկարող է տալ սպասված մեծ օգուտները հասարակութեան և պետութեան։ Զեմստվօյի գործունէութեան շրջանի լայնացնելը, կեանքին անհամապատասխան ընտրողական իրաւունքի փոփոխումը, զեմստվօյի համադասակարգային դարձնելը (որովհետև ազնուականների և խոշոր կալուածատէրերի թիւը հետզհետէ պակասում է), նրա ֆինանսների բարելաւումը—ահա մի շարք հրատապ հիմնական պահանջներ, որոնց գոհացումը անհրաժեշտ են համարում ոչ միայն ժողովրդական ներկայացուցիչները սկսած ձախակողմեաններից և վերջացնելով նացիօնալիստներով, այլ և կառավարութիւնը, որը նպատակ է դրել ամենամօտ ապագայում ներկայացնել ի հաստատութիւն ժողովրդական ներկայացուցչութեան՝ զեմստվօյի բազմակողմանի ռեֆորմի նախագիծը։

Տեղային ինքնավարութեան բարիքները վայելում են միայն Եւրոպական Ռուսաստանի ներքին նահանգները. չը կայ ինքնավարութիւն Արխանգելսկի նահանգում, Մերձբալթեան երկրում, Լեհական թագաւորութեան մէջ, Վիլնայի, Կովնայի և Գրօդնայի նահանգներում. Արևմտեան նահանգներում գործում է Պ. Ստոլիպինի 87-րդ յօդուածի հիման վրա անց կացրած օրէնքը. չը կայ զեմստվօ ամբողջ Սիբիրում, Կովկասում և Թուրքեստանում։ Զեմստվօն անհրաժեշտ է մանաւանդ Կովկասին. նրա մասին երազել են տասնեակ տարիների ընթացքում նրա լաւագոյն և առաջադէմ օրգանները, նրա այդ անհրաժեշտութիւնը շեշտված է նաև Կովկասի փոխարքայի ամենահպատակ զեկուցման մէջ։

Ներքին գործերի մինիստրութեան զեմստվօյի ռեֆորմի նախագիծը, որը արդէն յայտնված է մամուլի ներկայացուցիչներին, նախ նպատակ ունի տարածել զեմստվօն համայն Ռուսաստանի վրա որոշ ժամանակամիջոցում և որոշ հետևողականութեամբ։ Ամենամօտ ապագայում Պետական Դումա կը մտցվի Արխանգելսկի նահանգում զեմստվօ մտցնելու օրինագիծը, ապա Վիլնայի, Գրօդնայի և Կօվնայի նահանգների համար զեմստվային օրինագիծ։

Երկրորդ կարգում կը լինի Արևմտեան Սիբիրի զեմստվօն, որի բնաւորութիւնը դեռ որոշված չէ բաւական նիւթեր չունենալու պատճառով. յամենայն դէպս այդ երկու նահանգների՝ Տօբօլի և Տօմսկի զեմստվօն կը լինի տեղային ինքնավարութեան սկզբունքի վրա հիմնված։ Ապա ռեֆորմը կը տարածվի և արևելք՝ մինչև Ամուրի շրջանը։

Մօտիկ ապագայում մինիստրութիւնը կը ձեռնարկի Լեհաստանի և Մերձբալթեան երկրների համար զեմստվօ մշակելու գործին, որը ներկայացնում է առանձին դժուարութիւններ, որովհետև հարկատուութիւնը այստեղ հիմնված է բոլորովին ուրիշ սկզբունքների վրա։

Ամենից վերջը հերթը հասնում է Կովկասին և Թուրքեստանին։

Մինիստրութիւնը իր նախագծի մէջ յայտնում է, որ ինքը մշակել է մի շարք բարելաւումներ առողջապահական, ապահովագրական, ճանապարհների և այլն շրջաններում։

Մինիստրների խորհրդին արդէն ներկայացված է Լեհաստանի հողային դատարանների համար նշանակված միջոցները ճանապարհների զարգացման համար յատկացնելու օրինագիծը։

Վերջացվել են զեմստվօյի փոխադարձ շինութիւնների կրակից ապահովագրութեան օրինագիծը, գիւղերի մէջ շինարարութեան մասին կանոնագիր և այլն։

Առողջապահական մասից աչքի են ընկնում Հեռաւոր Արևելքի համար մշակված միջոցները և Լուգանսկում և Խաբարօվսկում հիւանդանոցներ բացելու օրինագծերը։

Մինիստրական օրինագիծը ընդառաջ է գնում բազմաթիւ համագումարների և ժողովրդական ներկայացուցիչների արտայայտած ցանկութիւններին։ 4-րդ Պետական Դուման հենց սկզբից իրան ցոյց տուեց որպէս «տեղային ինքնավարութեան Դումա»։ զեմստվօյի և քաղաքային ինքնավարութեան ռեֆորմները այնքան անհրաժեշտ են, որ այս հարցում միանում են ամենածայրայեղ սկզբունքային հակառակորդները. այդ ռեֆորմների անհրաժեշտութիւնը ընդունում է ամբողջ Դուման, նոյնիսկ աջակողմեանները, որոնց մէջ կան բազմաթիւ գիւղացիներ։

Առաջիկայ առաջադիմական բլոկը հոկտեմբերեանների և նրանցից ձախ կանգնած կուսակցութիւնների մէջ՝ հիմնվելու է ինքնավարութիւնների ռեֆորմի պլատֆորմի վրա։

Ի նկատի ունենալով Պետական Դումայի համախոհութիւնը այս խնդրում և կառավարութեան բարեհաճ վերաբերմունքը, պէտք է ասել, որ Ռուսաստանը մօտ ապագայում կանի ինքնավարութիւնների ռեֆորմով և նրանց համայն Ռուսաստանի վրա տարածելով պետական և հասարակական նշանակութեան մեծ քայլ։ Ե. Ե.

Մօսկվա

Կ. ԽԱՏԻՍԵԱՆԻ ՄԱՀՎԱՆ ՇՈՒՐՋ

—

Բժիշկ Բ. Աղասարեան ստացել է հետևեալ հեռագիրը.

«Պետերբուրգի հայ ակումբը խոնարհաբար խնդրում է ձեզ լինել նրա ներկայացուցիչը Կոստանդին Իվանիչ Խատիսեանի թաղմանը. մի անձի, որի եռուն, հայ ժողովրդի կուլտուրական վերածնութեան անձնուէր գործունէութիւնը որպէս պայծառ աստղ կը մնայ յաւիտեան։ Դրէք մի ափ հող իր հայրենիքի այդ ազնիւ զաւակի թանգագին աճիւնների վրա»։

Նախագահ՝ Տիգրանեան

ՊՍԱԿԻ ՓՈԽԱՐԷՆ

—

«Մշակի» № 241-ի մէջ արձանագրված 100 ռ. գումարը՝ ստացված Կ. Խատիսեանի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն, յանձնեցինք Կ. Խատիսեանի Թաղման Կարգադիր Յանձնաժողովին։

—

Կ. Խատիսեանի Թաղման Կարգադիր Յանձնաժողովը ստացել է Կատ. և Ստ. Լիսիցեաններից 20 ռուբլի պսակի փոխարէն, յօգուտ Խաչ. Աբովեանի մահարձանի ֆօնդի։

—

Կ. Խատիսեանի Թաղման Կարգադիր Յանձնաժողովը ստացել է պսակի փոխարէն յօգուտ Խ. Աբովեանի մահարձանի ֆօնդի տիկ. Սուսաննա Յօհաննիսեանից 15 ռուբլի։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ «Н. В.»-ում կարդում ենք. «Ինչպէս մենք լսել ենք, Կովկասի փոխարքայի երկու օգնականները—գեներալ Շատիլովը և սենատոր Վատացին—թողնում են իրանց պաշտօնները, նշանակվելով Պետական Խորհրդի անդամներ. գեներալ Շատիլովի յաջորդ անուանում են 2-րդ կովկասեան զօրաբանակի հրամանատար գեն. Միշլաևսկիին, իսկ Վատացիի յաջորդ՝ փոխարքայի դիւանապետ հոֆմեյստեր Ն. Լ. Պետերսօնին»։

---

*) Տես «Մշակ» № 228.

◆ Այսօր, ուրբաթ, Գրական-Գեղարվեստական Սալոնի հանդիսաւոր jour fixe-ը՝ վշտի և թախծի երեկոյթը՝ նուիրված է Ալէքսանդր Քալանթարի յիշատակին։ Երեկոյթը յատուկ հրաւիրագրերով է։ Հրաւիրված են և Ալէքսանդր Քալանթարի ընտանիքը, ազգականները, պաշտօնակիցները, թաղման եկած պատգամաւորները և Թաղման Կարգադրիչ Յանձնաժողովի անդամները։ Սկիզբը երեկոյեան ժամը 8½-ին։ Զաւարեանի և Խատիսեանի յիշատակներին նոյնպէս նուիրվելու են յատուկ երեկոյթներ։

◆ Կովկասի փոխարքային ներկայացուած երկրագործութեան ու հողային բարեկարգութեան գլխաւոր վարչութեան ուսումնական մասնաժողովի անդամ Աւետիս Քալանթարը։

◆ Տեղական լրագիրների ասելով՝ Թիֆլիսի նահանգապետ Չերնեավսկին բարձր պաշտօնով տեղափոխվում է ներքին նահանգներից մինը։

◆ Վերադարձաւ Թիֆլիս Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձու Րուդոլֆը։

◆ Թիֆլիսից Բաթում մեկնած կարգադրիչները հեռագրել են, որ Ս. Զաւարեանի մարմինը Բաթումից կը ճանապարհվի այսօր, ուրբաթ, երեկ. № 10 գնացքով. ուրեմն Թիֆլիս կը հասնէ վաղը, շաբաթ, նոյեմբ. 2-ին, առ. ժամը 8 ու 40 րոպէին։ Թաղումը տեղի կունենայ կիրակի օրը։

◆ Երեւանում նահանգապետ բարոն Տիզէնհաուզէնի նախագահութեամբ կայացել է գիւղատնտեսական խորհրդակցութիւն, որ միաձայն ընդունել է, թէ անհրաժեշտ է աւելացնել խոտացանութեան միջոցները։

◆ Թոյլատրված է գումարել նոյեմբերի 17-ին Թիֆլիսում Կովկասի քաղաքների ներկայացուցիչների երկրորդ համաժողովը։ Արդէն շատ քաղաքներից տեղեկութիւններ են ստացվել մասնակցելու մասին։

◆ Երէկ Բաթումի նաւահանգիստն է հասել 500,000 պուդ ամերիկական նաւթ անդրկովկասեան երկաթուղիների կարիքների համար։ Երէկ և եթ Բաթում մեկնեց անդրկ. երկ. կառավարիչ բարոն Ֆօն-Րօօպը։

◆ Թիֆլիսի կանանց բարձր դասընթացքների խորհրդի վերջին նիստում քննվել է դասընթացքների տնտեսական կառավարութիւնը արմատապէս վերաքննելու հարցը։ Խորհուրդը մտքերի փոխանակութիւնից յետոյ՝ ընտրել է յատուկ մասնաժողով այդ հարցի բազմակողմանի ուսումնասիրութեան համար։ Միևնոյն նիստում խորհուրդը յօտընկայս յարգել է հանգուցեալ պրոֆ. Սուրբօտինի յիշատակը, որ դասատու էր և կանանց բարձր դասընթացքներում։

◆ Բագուի դումայական շրջաններում միտք է յղացել հարց յարուցանել անուանելու Միլիօննայա փողոցը, որի վրա կառուցված են տեխնիքական ընկերութեան և Կուլտուրական Միութեան շինութիւնները, հանգուցեալ Կ. Խատիսեանի անունով։

ԼՈՒՐԵՐ ՄՈՍԿՎԱՅԻՑ

◆ Անցեալ օրը հողին յանձնեցին մանկավարժական բարձր դասընթացքների ուսանողուհի Կօնդրատենկօյին, որ զոհ էր գնացել 2 շաբաթ առաջ բնախօսական այգու մօտ սլացող կօզակի ձիու սմբակներին։ Նրա գլուխը ջարդվել էր ու փշավել ուղեղը. 2 շաբաթ օրհասական մօմենտների ենթակայ, թշուառ զոհը, միայնակ՝ հսկայ քաղաքում, մեռնում է ու այդպիսով նոյնպիսի անյայտութեամբ հեռանում այս աշխարհից, ուր միայն անձնական-ազգակցական բարիքն է թագաւորում։

◆ Երէկ պատարագից յետոյ Լազարեան ճեմարանում տեղի է ունեցել տարեկան ակտ. կարդացել է դպրոցի տեղեկագիրը վերատեսուչ պրոֆ. Գիւդուլեանով, բաժանվել են առաջադէմ աշակերտներին գովաբանական վկայագրեր. իսկ ուսուցիչ Կ. Կուսիկեանը մի քանի խօսքով պատմել է իր էջմիածին կատարած ճանապարհորդութեան մասին։

◆ Մօտ ժամանակներս Մոսկվայի կենտրոնական մասում կը բացվի ցուցահանդէս թէ՛ նոր՝ դեռ ցուցադրված և թէ արդէն յայտնի նկարների նախագծերի ցուցահանդէս, որին մասնակցում են յայտնի նկարիչներ և «Царь Іоанъ Грозный и сынъ»-ի ստեղծագործող Րէպինը։

◆ Լսում ենք, որ տեղիս հայ ուսանողութիւնը նոյեմբերի վերջին ազնուականաց ժողովարանում տօնելու է գրերի գիւտի 1500-ամեակը և տպագրութեան 400-ամեակը։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂ ԱՐ.

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Չորեքշաբթի, հոկտ. 30-ին, երեկոյեան ժամը 8-ին, Կ. Հ. Բարեգ. Ընկ. դահլիճում, ներկայութեամբ մեծ բազմութեան, կայացաւ Կարապետ եպիսկոպոսի դասախօսութիւնը՝ «Հայոց գրականութեան մասին իր զարգացման դասական շրջանում»։

Ատենախօսը իր դասախօսութիւնը կատարեց բանաւոր։

Սկզբում նա ընդհանուր գծերով ծանօթացրեց լսարանը հայկական պատմութեան նախնադոյն շրջանների՝ ուրարտեան և հաթեան շրջանների հետ. ապա ցոյց տուեց, թէ ինչ պատկեր էր ներկայացնում հայութիւնը գրերի գիւտի ժամանակ և ինչպիսի միջավայրում սկիզբն առաւ ս. Մաշտոց-Մեսրոպի գործունէութիւնը։ Խօսեց «Ոսկեդարեան» լեզուի և գրականութեան մասին, բացատրեց V դարի վարդապետական-մեկնաբանական գրուածների էութիւնը և բովանդակութիւնը, անցաւ VI դարին, որ աչքի է ընկնում իր դաւանաբանական-ջատագովական գրուածներով, երկար կանգ առաւ Քաղկեդոնի ժողովի և նրա յարակից պարագաների վրա, ցոյց տուեց, թէ ինչու հայոց եկեղեցին չընդունեց Քաղկեդոնի ժողովի որոշումները, խօսեց ապա հայոց եկեղեցու բռնած ուղղութեան մասին Բաբգէն, Ներսէս Բ., Յովհաննէս Բ., Մովսէս Եղուարդեցի, Աբրահամ Աղբաթեցի և Կոմիտաս կաթողիկոսների օրերում։ Վերջում անցաւ VII դարի գրականութեան։

Դասախօսը պարզեց մի քանի նոր հայեացքներ հայոց կլասիկական գրականութեան և գրաբառ լեզուի մասին, որոնք շատ հետաքրքրական են գիտութեան տեսակէտից. յայտնեց իր կարծիքը Մովսէս Խորենացու պատմութեան ժամանակի մասին և առհասարակ ցոյց տուեց մեծ հմտութիւն և էրուդիցիա իր ընտրած նիւթի մէջ։ Եւ թէև Կարապետ եպիսկոպոսը վաղուց ձեռք է բերել լուրջ գիտնականի համբաւ ոչ միայն մեր, այլ և եւրոպական եկեղեցական գիտութեան մէջ, բայց ներկայ դասախօսութիւնը ապացուցեց աւելի լայն հասարակութեան համար, որ յանձին Կարապետ եպիսկոպոսի էջմիածինը ունի մի պատրաստված և ձեռնհաս գիտնական ույժ, որ մեծապէս կարող է նպաստել հայոց պատմութեան ուսումնասիրութեան գործին։

Եւ շնորհակալ պէտք է լինել Հայոց Ազգագրական Ընկերութեան, որ կազմակերպեց այդ դասախօսութիւնը։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Բէյլիսը արդարանալու առիթով ստանում է բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ Ռուսաստանից և արտասահմանից։

◆ Լուրերի համաձայն, Բէյլիսին մեղադրող դատախազի օգնական Վիպպէրը ներկայացրել է հրաժարականի խնդրագիր։

◆ Ինչպէս տեղեկացնում են, արդարադատութեան մինիստր Շչէգլովիտովը Բէյլիսի արդարանալու պատճառով հրաժարվելու է։

◆ Պետերբուրգի բանուորները ողջոյնի հեռագիր ուղարկեցին Բէյլիսին։

◆ Գարնանը անգլիական թագաւորական զոյգը կայցելէ Ֆրանսիա ի փոխարէն Պուանկարէի Անգլիա գործած այցելութեան։

◆ Եւրոպական և ռուսական լրագիրները շարունակում են ընդարձակ յօդուածներ նուիրել նորերս վախճանված՝ Դարվինի ուղղութեամբ գրող յայտնի սօցիօլօգ և բարենորոգիչ, անգլիական սօցիալիստական կուսակցական անդամ, ժողովրդի իսկական բարեկամ, բնագէտ Ալֆրեդ Րօսսէլ Ուօլլէսի յիշատակին։ Ինչպէս յայտնի է, հանգուցեալը իր պաշտպանողական խօսքը ասել է նաև յօգուտ թիւրքահայերի, իսկ նրա «Հրաշալի դարը» մեծ աշխատութիւնը տրվեց իբրև «Մուրճի» յաւելուած հայերէն թարգմանութեամբ։

◆ Ռուսաստան է գալիս յայտնի ֆրանսիացի օդագնաց Միգուն, որ մրցակից չունի գլխիվայր թռչելու մէջ։ Նա ձեռք է բերել այդ թռիչքներով աւելի քան կէս միլիօն կարողութիւն։

◆ Ռուսաց դիւանագէտներն ամեն ջանք գործ են դնում վերականգնելու դիւանագիտական կապերը Սերբիայի և Բուլգարիայի մէջ։

◆ Տեղեկացնում են, որ ճան. հաղորդակցութեան մինիստր Րուխլօվը արդէն հրաժարական է տուել։

◆ Բուլգարիան Աւստրիայի հետ կապել է գաղտնի դաշն Սերբիայի դէմ։

◆ Պրեմիէր Կոկօվցեվը Բեռլինում մնալու է մի քանի օր ևս։

◆ Ամերիկայի արևմտեան մասում սարսափելի ձիւնախառն փոթորիկ է։ Շատ քաղաքներ կտրված են աշխարհից։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏ. ՀԵՌ. ԳՈՐԾ.)

30 հոկտեմբերի

ՎԻԼԼԱ-ԿՈՒԲԼԷ։ Զինուորական օդագնաց կապիտան Լազարեդը իջնելիս ընկաւ գործիքի տակ և մահացաւ։

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐ։ Լաբինսկայա ստանիցայում հասարակութեան ներկայութեամբ թռիչք կատարելիս օդագնաց Ցարութինեանը ընկաւ և ծանր վիրաւորվեց։ Գործիքը ջարդվեց։

ԼՕՆԴՕՆ։ Բացվեց ծովի վրա կեանքի պաշտպանութեան հարցով զբաղվող միջազգային վեհաժողովը լորդ Մերսէյի նախագահութեամբ։

ԹԱՒՐԻԶ։ Օդագնաց Կուզմինսկին թռաւ դէպի Ուրմիայի լիճը։

Երկաթուղու կառուցման աշխատանքները սկսված լինելու պատճառով նոյեմբերի 1-ից դադարում է աւտոմօբիլների երթևեկութիւնը Ջուլֆայից—Թաւրիզ։

ՍՕՖԻԱ։ Եկան եապօնացի 4 օֆիցէր, որոնք ճանապարհորդում են բալկանեան պետութիւնների հետ ծանօթանալու համար։

ԼՕՆԴՕՆ։ Դուբլինում գործատէրերը պահանջում են արձակել բանուորների պարագլուխ կալանաւորված Լարկինին։ Կոչ է ուղղվել գործադուլ անելու նաւահանգստի բոլոր բանուորներին։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

1913 թւի ապրիլի 18-ից մինչև 1914 թ. ապրիլի 17-ը

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—**Արագ գնացքը** № 6—10 ժ. 16 ր. առ., հասնում է Աղստաֆա 12 ժ. 34 ր., Գանձակ 3 ժ., Եւլախ 4 ժ. 31 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 6 ր. եր., Բագու 11 ժ. 13 ր. գիշ.: **Պօստային գնացքը** № 4—10 ժ. 16 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 1 ժ. 6 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 16 ր. առ., Եւլախ 6 ժ. 15 ր. առ., Հաջի-Կաբուլ 10 ժ. 46 ր. առ., Բագու 3 ժ. 31 ր. ցեր.: **Մարդատար գնացքը** № 8—6 ժ. 29 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 50 ր. եր., Գանձակ 11 ժ. 23 ր. գիշ., Եւլախ 1 ժ. 1 ր. առ.: Հաջի-Կաբուլ 4 ժ. 42 ր. առ., Բագու 7 ժ. 53 ր. առ., **Խառն գնացքը** № 106 (Մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 23 ր. առ., հասնում է Աղստաֆա 8 ժ. 41 ր. առ., Գանձակ 1 ժ. 7 ր. ցեր., Եւլախ 5 ժ. 19 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 29 ր. գիշ.. Բագու 7 ժ. 28 ր. առ.:

ԲԱԹՈՒՄ.—**Պօստային գնացքը** № 3—9 ժ. 51 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 56 ր. ցեր., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.: **Մարդատար գնացքը** № 7—4 ժամ 40 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլօվօ 8 ժ. 46 ր. եր., Բաթում 5 ժ. 40 ր. առ.: **Մարդատար գնացքը** № 9—10 ժ. 30 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 2 ժ. 31 ր. գիշ., Բաթում 10 ժ. 59 ր. առ.: **Խառն գնացքը** № 107 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 48 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 8 ժ. 20 ր. առաւ., Բաթում 10 ժ. 18 ր. գիշ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—**Պօստային գնացքը** № 4/3—12 ժ. 51 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 48 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12 ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց Երեւան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 42 ր. ցեր.: **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 24/23 (միայն II և III կարգի վագօններով)—8 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 23 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 6 ժ. 57 ր. առ., Էջմիածին 12ժ. 10 ր. ցեր., Ուլուխանլու 12 ժ. 38 ր. ցեր., Երևան 1 ժ. 33 ր. ցեր.: **Մարդատար-ապրանքատար գնացքը** № 14/13—12 ժ. 46 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 13 ր. առ., Ալէքսանդրօպօլ 11 ժ. ր.50 ցեր., Կարս 4 ժ. 18 ր. ցեր.:

ԲՕՐԺՕՄ.—**Մարդատար գնացքը** № 17/18—8 ժ. 2 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 41 ր. առ., Բօրժօմ 9 ժ. 31 ր. ցեր.: **Մարդատար** № 19/20—3 ժ. 18 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 59 ր. ցեր., Բօրժօմ 1 ժ. 2 ր. երեկ.:

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—**Արագ գնացքը** № 5—9 ժ. 35 ր. եր. **Պօստային գնացքը** № 3—9 ժ. 1 ր. առ.: **Մարդատար գնացքը** № 7—3 ժ. 53 ր. ցեր.: **Խառն գնացքը** № 107—2 ժ. 12 ր. գիշ.:

ԲԱԹՈՒՄԻՑ.—**Պօստային գնացքը** № 4—9 ժ. 16 ր. երեկ.: **Մարդատար գնացքը** № 8—5 ժ. 54 ր. ցեր.: **Մարդատար գնացքը** № 10—8 ժ. 40 ր. առ.: **Խառն գնացքը** № 106—3 ժ. 38 ր. գիշ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—**Պօստային գնացքը** № 4Д./3—7 ժ. 32 ր. եր.: **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 26/25—(II և III կարգի վագօններով)—10 ժ. 50 ր. առ.: **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 16/15—7 ժ. 28 ր. առ.:

ԲՕՐԺՕՄԻՑ.—**Մարդատար գնացքը** № 17/18—11 ժ. 7 ր. եր.: **Մարդատար գնացքը** № 19/20—7 ժ. 38 ր. առ.:

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ

Նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի։ Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան. առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8. Սեմեօնովսկայա փող., № 18 (Վորոնցովի արձանի մօտ)։ Բժշկի բնակարանը Սեմեօնովսկայա, № 16.

(Հ. ու. Վ.) 804. 100—15

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ГОЛОВНУЮ БОЛЬ и МИГРЕНЬ
РАДИКАЛЬНО УСТРАНЯЕТЪ
„МИГРЕНО-НЕРВОЗИНЪ“
БЕЗУСЛОВНО ВѢРНОЕ и БЕЗВРЕДНОЕ РАСТИТЕЛЬНОЕ СРЕДСТВО.
ТРЕБОВАТЬ въ АПТЕКАХЪ и АПТ. МАГАЗ.
ТОЛЬКО НАСТОЯЩИХЪ ПОРОШКОВЪ съ ПѢТУХОМЪ апт. А. ГОНСЕЦКАГО въ Г. ПЛОЦКѢ по 10 коп. за шт.
ОСТЕРЕГАЙТЕСЬ ПОДДѢЛОКЪ! ФАБР. МАРКА

(В. 54178) 39—7

Լոյս տեսաւ

„АРМЯНО-ГРИГОРІАНСКІЙ КАЛЕНДАРЬ“

на 1914 годъ ◆ Цѣна 70 коп.
Դիմել՝ Ставрополь губ. Священнику Сааку Теръ-Ованнесьянцъ.

(ա.օ.) 942. 10—8

Въ С.-Петербургѣ вышла изъ печати
ЛЕВОНЪ ГРИГОРЯНЦЪ

ЧАЙКА

(Стихотворенія)

Переводъ съ армянскаго И. Гриневской, Аполлона Коринфскаго, В. Уманова-Каплуновскаго, М. Шагэ—М. Н. Шанъ-Гирей.
Съ портретомъ автора. Цѣна 20 к.
Розничная продажа: въ Тифлисѣ и въ Баку—у мѣстныхъ книготорговцевъ.
Складъ: С.-Петербургъ, 2 П. О. Редакція «Журналъ Лечебникъ».

(Կ. Հ. ու.) 864. 10—8

ԳՐԱՑՈՒՑԱԿ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1) Լ. Ուօլէս. «Բէն-Հուր», հ. I Թարգմ. անգլ. Փ. Վարդանեանի	— 75 կ.
2) Նոյն. հատոր II . .	— 75 կ.
3) Շիրվանզադէ. «Արտիստը»	— 25 կ.
4) Մուրացան. «Գէորգ Մարզպետունի», պատմական վէպ	1 ր. 20 կ.
5) Ժուկօվսկի. «Բնած արքայադուստրը», պատկեր. հեքիաթ, փոխ. Ա. Թ. Խնկոյեանի .	— 15 կ.
6) Ստ. Տէր-Աւետիքեան. «Պատմուածքներ» . . .	— 50 կ.
7) Նար-Դոս. «Մահը», վէպ	1 ր. 20 կ.
8) Բուբակին. «Սարբերկրեայ կրակ», պատկ., Թարգ. Մ. Պ.	— 50 կ.
9) Չ. Դիկկէնս. «Դաւիթ Կօպպէրֆիլդ», պատկ. վէպ, Թարգ. Փ. Վարդանեան, մասն առաջին	— 75 կ.
10) Նոյն. Մասն երկրորդ .	— 75 կ.
11) Նոյն. Մասն երրորդ .	— 75 կ.
12) Շիրվանզադէ. «Ժողովածու երկերի», հատոր IV .	1 ր. 50 կ.
13) Դ. Դեմիրճեան. «Բանաստեղծութիւններ», հեղինակի պատկերով . . .	— 50 կ.
14) «Ոսկէ աղջիկ» պատկերազարդ, ռուս. Թարգմ. Լ. Մելիք-Ադամեան . . .	— 07 կ.
15) Մ. Ի. Սիբիրեակի «Ակ-Բօզատ», պատկերազարդ, Թարգ. Ս. Թորոսեան . .	— 15 կ.
16) «Ստ. Նազարեանի» երկերը, I հատոր . . .	1 ր. 50 կ.

ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

№ 1. Գաբրիէլ դ'Աննունցիօ. «Ջիօկօնդա», ողբ. 5 արար., ֆրանս. Թարգ. Ս. Յակոբեան .	— 15 կ
№ 2. Իլիա Ճավճավաձէ. «Մուրացկանի պատմածը», վրաց. Թարգ. Տ. Փիրումեան .	— 15 կ.
№ 3. Ա. Ահարոնեան. «Աստծու կրակը» . . .	— 15 կ.
№ 4—5. Իւշկեվիչ. «Թագաւոր», ռուս. Թարգ. Յ. Յովհաննիսեան	— 30
№ 6. Յ. Մալխասեան. «Յանցանքը»	— 15
№ 7. Սէյրի. «Միլ ու ծաղիկ»	— 15
№ 8-9. Ա. Տոլստոյ. «Իոանն Ահեղի մահը», Թարգմ. Տիգրան Յովհաննիսեան . ,	— 30 կ.
№ 10. Ա. Չեխօվ. «Պատմուածքներ», Թարգ. Ռ. Խան-Ազատ	— 15 կ.
№ 11—12. Ա. Ս. Գրիբոեդով. «Խելքից պատուհաս», կոմ. 4 գործ., ոտանաւորով, Թարգ. Լ.	
№ Մանուէլեանի . .	— 30 կ.
№ 13. Լորդ Բայրօն. «Մանֆրէդ», անգլիերէն բնագրից Թարգմ. Տիրայր վարդ. . .	— 15 կ.
№ 14. Գիւ-դը-Մօպասան. I «Ծարպագունդը», II «Զարդը», ֆրանս. Թարգ. Ռ. Խան-Ազատ	— 15 կ.
№ 15. Վ. Վալադեան, «Բժիշկը», դրամա 3 գործ. . .	— 15 կ.
№ 16—17. Կնուտ Համսուն. «Պանը», գերմ. Թարգմ. Աւ. Իսահակեան . .	— 30 կ.
№ 18. Մարգար. «Վէպիկներ»	— 15 կ.
№ 19. Ն. Աթայեան. «Թերուս կնոջ խոստովանանքը» .	— 15 կ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 1. Ստ. Տէր-Աւետիքեան. «Զարբաստիկ Թուղթը», .	— 8 կ.
№ 2. Մովսէս Ղուկասեան. «Նահապետական տունը» . .	— 5 կ.
№ 3. Ս. Մելիք-Շահնազարեանց. «Գործակատար Մարտիրոսը» .	— 07 կ.

ՊԱՀԵՍՏԻ ԳՐՔԵՐԸ

Շիրվանզադէ. «Ժողովածու երկերի», հատոր I . .	1 ր. 50 կ.
Նոյն. Հատոր II . .	1 ր. 50 կ.
Նոյն. Հատոր III . .	1 ր. 50 կ.
4 հատորի գինը միասին .	5 ր. —
Ղ. Աղայեան. «Հէքիաթներ» I .	— 15 կ.
» » II	— 15 կ.
Յ. Թումանեան. «Սասունցի Դաւիթ»	— 15 կ.
» » «Անուշ» .	— 15 կ.
» » «Լեգենդաներ»	— 15 կ.
Դ. Դեմիրճեան. «Ուխտաւորները», «Աշուղի հէքիաթը» . .	— 7 կ.
Ս. Շեխեան. «Մի մահ», «Անատակը», «Պատմուածքներ» .	— 7 կ.
Շանթ. «Երգեր» . .	— 15 կ.
» «Լեռան աղջիկը» .	— 15 կ.
Շիրվանզադէ. «Պատւի համար», դրամա 4 արարուածով .	— 60 կ.
Գ. Վանցեան. «Պատմական քերականութիւն արեւելահայ լեզուի»	— 75 կ.
Բժ. Գ. Մաղաքեան. «Սնունդ և ստամոքսի հիւանդութիւն»	— 15 կ.
Օր. Հ. Մելիք-Հայկազեան. «Մի պատյտ Ճապօնիայում» .	— 40 կ.
Վ. Վերեսաեւ. «Մի անմեղ մարդու սոսկալի մահը», Թարգմ. Պ. Պռօշեանի . . .	— 6 կ.
Ի. Վօյնիչ. «Բոռ», Թարգ. Շանթի	1 ր. —
Ֆօն-Պօլէնց. «Գիւղացի Բիւտներ», Թարգ. Ս. Թառայեանի	1 ր. 25 կ.
Էրկման-Շատրիան. «Մի գիւղացու պատմութիւնը», Թարգմ. Վ. Փափազեանի . .	1 ր. 25 կ.
Ժամագործի յիշողութիւնները», Թարգմ. Շ. Խաժակեանի	— 8 կ.
Գասւլէ. «Կապիտալ և կապիտալիզմ», Թարգմ. Ս. Թառայեանի . . .	-- 12 կ.
Պրոֆ. Վ. Զօմբարտ. «Ինչու այժմ ամեն մարդ հետաքրքրվում է քաղաքատնտեսական և ընկերվարական խնդիրներով», Թարգ. Ս. Թառայեանի . .	— 10 կ.
Պրոֆ. Թ. Արնէլիս. «Իրաւունքի ծագումն ու պատմութիւնը», Թարգմ. Ս. Թառայեանի .	— 10 կ.
Մարգար. «Գող» . .	— 20 կ.

Դիմել՝ Թիֆլիսի և գաւառական գրախանութներին, Ընկերութեանս ճիւղերին, աշխատակից անդամներին, հայաբնակ վայրերի մանր վարկի ընկերութիւններին, գործակալներին։ Պահեստը Ընկ. մօտ. Тифлисъ, Кавказское Армянское Издательское Общество, Абасъ-Абадская пл. № 7.

980. 1—1

Կ. Հ. ՀՐԱՏ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Լոյս տեսաւ և ուղարկվեց բոլոր բաժանորդներին «ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»-ի № 19 գիրքը՝

„ԹԵՐՈՒՍ ԿՆՈՋ ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔԸ“

Տիկ. Ն. Աթայեանի

Գինն է 15 կոպ.

Դիմել Թիֆլիս և գաւառական բոլոր գրավաճառներին, Ընկեր. աշխատակ. անդամներին, գործակալներին, Ընկ. ճիւղերին և հայաբնակ վայրերի մանր վարկի ընկերութիւններին։ Պահեստը Ընկերութեան մօտ՝ Тифлисъ, Кавказское Армянское Издательск. Общ., Абасъ-Абадская пл. № 7.

980. 1—1

Ա. ԿԻՎԻՏ

Պատրաստում է ՀԱՍՈՒՆՈՒԹԵԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ համար, նոյնպէս և զինուորական ու միջնակարգ բոլոր դպրոցները մտնելու, նաև I կարգի կամաւոր զինուոր պատրաստվելու համար։ Ըստ ցանկութեան՝ Ա. Կիվիտ վերցնում է իր վրա ամբողջ պատասխանատուութիւնը քննութիւնների աջողութեան վերաբերմամբ։ Ընդունելութիւնը ցեր. ժամը 12—1-ը և երեկ. ժամը 5—6-ը։ Ելիզավէտինսկայա փող. № 142 (անկիւն Պերազովի փող.)։

(ա. օ.) 972. 10—2

ԳԱՅԻԱՆԵԱՆ ԴՊ. ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ

խնդրում է Մողնու եկ. ծխականներին, կիրակի, նոյեմբերի 3-ին, ցերեկ. ժամը 12-ին, շնորհ բերել դպրոց, ուր սրբազան առաջնորդի թոյլատւութեամբ ժողով է լինելու։ Ժողովի զբաղմանց առարկաներն են՝ անցած տարվայ ելից և մուտից հաշիւների վերստուգութիւնը և այս տարվայ նախահաշւի քննութիւնը։ Նոյն ժողովին պիտի ընտրվի երեցփոխ եկեղեցու համար։ Եթէ նշանակված օրը ժողովը չը կայանայ, երկրորդ և վերջնական ժողովը տեղի կունենայ նոյեմբերի 10-ին։

Նախագահ հոգաբարձութեան՝ Նիկ. Տէր-Ղեւոնդեան

978. 2—1

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐ. ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ

Տ. Մ. ՓԻԼՈՍԵԱՆԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ

(Թիֆլիս, Միխայլովսկի պր., № 24) ունկնդիրների խոշոր թիւ լինելու պատճառով, բացվում է զուգընթաց նոր բաժանմունք։ Ունկնդիրների թիւը սահմանափակ է։ Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ից։ Խնդիրների ընդունելութիւնը ամեն օր՝ ցերեկվայ ժամը 11½—12-ը և երեկ. ժամը 5—6-ը։

(ու. կ. հ.) 973. 5—1

Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութիւնը

պատրաստել է այս տարի, որպէս օրինակ, փոքր քանակութեամբ

ՏՕՄԱՏ-ՓԻՒՐԷ

հմուտ մասնագէտի հսկողութեան ներքոյ, օրինակելի մաքրութեամբ, պահպանելով թարմ տոմատի համը և հիւթը։ Պատուէրներն ընդունվում են Ընկերութեան վարչութեան գրասենեակում. Սոլոլակսկայա փողոց, № 9. Հեռախօս № 374.

932. 6—5

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

յայտարարում է ի գիտութիւն ճանապարհորդների և ապրանք ուղարկողների, որ Ընկերութեան շոգենաւ «ՖՐԻԺԻՆ» (նաւապետ Միսրէյէ) մեկնում է Բաթումից Մարսէլ հանդիպելով Տրապիզոն, Սամսոն և Կ. Պոլիս

Հինգշաբթի, նոյեմբերի 7-ին (նոյեմբերի 20-ին ն. տ.) 1913 թ.

Տեղեկութիւնների համար խնդրում են դիմել Ընկ. Թիֆլիսի գործակալ պ. Ս. ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆԻՆ, իր գրասենեակում, որ գտնվում է Արմեանսկի բազարում՝ Փոստէնի դէմ Մանթաշեանների։ Հեռախօս № 7—21.

975. 1—1

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный